Azg
armenian daily
14 ՄԱՐՏ 1995 ԵՐԵՔՇԱԲԹԻ # 46 (800)

Թուրքիան բացո՞ւմ է օդային սահմանը

Ինչպես հաղորդում է «Միլլիյեթ» թերթը, Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելն ու վարչապետ Թանսու Չիլլերը, որպես բարի կամքի արտահայտություն, կարգադրել են բացել Հայաստանի եւ Թուրքիայի օդային տարածքները կապող H 50 օդային միջանցքը, որը չի գործում արդեն երկու տարուց ի վեր: Այդ կարգադրության հիման վրա թուրքական օդային ուղիների վարչությունը հատուկ նոտայով ոտեմ է դիմեր համապատասխան միջազգային կազմակերպությանը՝ հայտնելով H 50 միջանցքի վերաբացման մասին:

Կենսարկվի ԱՊՀ արտաքին սահմանների ղեկտղանության հիմնադրույթը

ԵՐԵՎԱՆ, 13 ՄԱՐՏ, ՍՆՄԲ: ԱՊՀ անդամ երկրների սահմանապահ զորքերի, հրամանատարների հերթական հանդիպումը տեղի կունենա մարտի 30-31-ը Ալգաբադում: Հայաստանի Հանրապետության սահմանապահ զորքերի հրամանատար, գեներալ մայոր Լեւոն Ստեփանյանը «Սնարք» գործակալության թղթակցին հայտնել է, որ հանդիպմանը նախատեսվում է ստորագրել Համագործակցության արտաքին սահմանների ղեկտղանության հիմնադրույթի հրատարակման հարցեր:

ԿՈՂԵՆՀԱԳԵՆ

Լեւոն Տեր-Պետրոսյանը հավանություն է տվել սոցիալական զարգացման ՄԱԿ-ի գագաթաժողովի ծրագրին

Մարտի 12-ին Կոպենհագենում կայացած սոցիալական հարցերին նվիրված ՄԱԿ-ի գագաթաժողովում ելույթ ունեցավ նաեւ ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, որը մասնավորապես ասաց, թե գագաթաժողովի Գործողությունների ծրագիրը ինքնին վկայում է տնտեսական եւ սոցիալական զարգացման փոխկախվածությունը: Կենտրոնացված տնտեսությունների վերափոխման գործընթացը ներառում է կառուցվածքային փոփոխությունների խաղաղ կանոնություն, այն է՝ առեւտրի եւ ներդրումների ազատականացում, ինչպես նաեւ ֆինանսական եւ հարկային բարեփոխումներ, ասաց նախագահը, ավելացնելով, որ վերափոխման համար դժվարանվում է տնտեսական, քաղաքական, սոցիալական եւ իրավական միջավայրի ստեղծում, ինչն իր հերթին հնարավոր է դարձնում սոցիալական զարգացումը: Նախագահի կարծիքով, «տնտեսական անցումը Հայաստանում, ինչպես եւ բոլոր նորաստեղծ ժողովրդավարական երկրներում, չունի իր դասական նախադեպը: Այն դասանցում է նվիրվածություն եւ համբերություն, ինչպես նաեւ միջազգային հանրության օժանդակությունն ու հաջողությունը»: Ողջունելով Գործողությունների ծրագրում ՄԱԿ-ի համակարգի դերը դրոշների վերանայման, վերափոխման եւ վերակառուցման գիտակցումը, ինչպես նաեւ Համաշխարհային բանկին, Միջազգային արժութային հիմնադրամին, տարածաշրջանային եւ ենթաշրջանային բանկերին եւ հիմնադրամներին ուղղված կոչը իրենց ծրագրերում եւ գործունեության մեջ սոցիալական զարգացման խնդիրներին էլ ավելի մեծ տեղ հատկացնելու վերաբերյալ, Լեւոն Տեր-Պետրոսյանը հավաստիացրեց, որ Հայաստանը ստանձնում է միջազգային հանրության սոցիալական խնդիրները լուծելու դատաստանավության իր բաժինը:

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

ԵԱՀԿ ուժերի մանդատը կճշտվի

Ինչպես հայտնի է, Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում ԵԱՀԿ գործող նախագահ Վլատկո Կովաչի ղեկավարությամբ սկսվելու են աշխատանքները ԵԱՀԿ ուժերի մանդատը ճշտելու ուղղությամբ: Ադրբեջանական աղբյուրները հաղորդում են, թե սրանք իսկ այդ աշխատանքներին մասնակցելու նպատակով Վիեննա է մեկնել Ադրբեջանի ոտեխորհրդական Վաֆա Գուլուզադեն, որը նախօրեին հայտարարել է, թե Վիեննայում տեղի կունենա նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի հերթական նիստը՝ ասելով հակամարտող կողմերի մասնակցությամբ:

Ադրբեջանի ոտեխորհրդականը տեղեկացրել է նաեւ, թե մարտի 20-ին Ստոկհոլմում Մինսկի խմբի համանախագահների ղեկավարությամբ տեղի կունենա աշխատանքային հանդիպում Հայաստանի, Ադրբեջանի, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի հայկական եւ ադրբեջանական համայնքների ներկայացուցիչների միջեւ: Նա նշել է, թե բանակցությունների այդ փուլից հետո, որը կտեւի երեք օր, աշխատանքները կսկսի Մինսկի խումբը ընդլայնված կազմով: Ըստ Գուլուզադեի, ադրբեջանական կողմը հավաստիացրել է ստացել, թե այդ նստաշրջանի օրակարգ կմտնի նաեւ Լաչինից եւ Շուշիից հայկական զորքերի դուրսբերման հարցը: Նա ընդգծել է, թե ի տարբերություն Հայաստանի, Ադրբեջանը արդեն իսկ նեղկայացրել է իր առաջարկները ու հարցերի այն շրջանակը, որոնց շուրջ իրենք պատրաստ են գնալ փոխզիջման: Նա նաեւ դիմել է Մինսկի խմբի համանախագահներին, խնդրելով Հայաստանին առաջարկել նույն պես նեղկայացնել իր տեսակետները հակամարտության կարգավորման շուրջ: Նշենք, որ Վիեննայում կայանալիք բանակցությունների եւ մասնավորապես օրակարգի վերաբերյալ Հայաստանի պատասխանությունն ակնկալվում է ապրիլի 3-ին:

ՍԱՀՄԱՆ

Պատերազմի նոր փուլի սկի՞զբ, թե «կրքեր նավթամուղի շուրջ»

Սահմաններում ոտնձգություններ շարունակվում են

ԱՐՄԵՆ ԲԱԳԴԱՍԱՐՅԱՆ

Մարտի լույս 13-ի գիշեր ադրբեջանական կազմավորումներ շարունակել են ոտնձգություններ Հայաստանի հյուսիս-արեւելյան սահմանների ուղղությամբ նոնականներից եւ այլ զինատեսակներից գնդակոծելով Նոյեմբերյանի շրջանի Դովեղ, Իջեւանի շրջանի Բերքաբեր եւ Մարիկյուղ գյուղերի հայկական պաշտպանական դիրքերը: Ինչպես հաղորդում են պաշտպանության նախարարության լրատվական ծառայությունից, տուժածներ չեն եղել: Հայկական սահմանապահ ուժերը ձեռնպահ են մնացել պատասխան գործողություններից: Հայաստանի սահմանամերձ մյուս շրջաններում երեկ եւ նախորդ գիշեր հրադադարը հարաբերաբար հանգիստ է եղել: Իրենց հերթին ադրբեջանական աղբյուրները հաղորդում են, թե երեկ եւ նախորդ գիշեր հայկական կազմավորումներ ճակատամարտ զորագործություններ են ձեռնարկել: Ադրբեջանի Ղազախի եւ Քոռոգի շրջանների ուղղությամբ: Աճառամասնությունները չեն հաստատվում:

Այսպիսով, ավելի քան մեկ տարի է, ինչ Հայաստանի հյուսիս-արեւելյան սահմանամերձ շրջաններում լարվածությունը չի թուլանում: Ադրբեջանական կազմավորումները շարունակում են պարբերաբար գնդակոծել եւ հրետակոծել սահմանամերձ հայկական բնակավայրերն ու պաշտպանական դիրքերը՝ երբեմն-երբեմն փորձելով ներխուժել Հայաստանի տարածք: Իսկ ռազմական գործողությունների հերթական այս փուլը, որը մի շարք դիտորդների կարծիքով նշանակում է որոշակի հրադադարի ավարտ եւ պատերազմի սկիզբ, սկսվեց մարտի 4-ի առավոտյան, երբ ադրբեջանական ուժերը երկարատեւ հրետանային նախապատրաստությունից հետո տանկերի եւ զրահամեքենաների աջակցությամբ լայնածավալ գրոհ ձեռնարկեցին Տավուշի շրջանի Այգեձոր գյուղի ուղղությամբ: Մի քանի ժամ տեւած մարտերի արդյունքում հայկական սահմանապահ ուժերին հաջողվեց ետ շրջել հակառակորդին պատճառելով կենդանի ուժի եւ մարտական տեխնիկայի զգալի կորուստներ: Հայկական կողմից զոհվեց երկու, վիրավորվեց 20 զինվոր, թեեւ ադրբեջանական աղբյուրներ հայտնեցին, թե իբր հայկական կողմը մոտ 40 զոհ է տվել: Միաժամանակ հրետակոծվում էր նաեւ Տավուշի շրջանի Մոխես գյուղը, իսկ նույն օրը գնդակոծությունների թիրախ էին դարձել նաեւ Նոյեմբերյանի շրջանի Շամարավան եւ Բարեկամավան գյուղերի հայկական պաշտպանական դիրքերը, իսկ հաջորդ օրը Իջեւանի շրջանի Սեւքար գյուղը:

Սակայն հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ կատարվածը սահմանային դարձ միջադեպ չէր, այլ նախապես լավ մտածված ծրագիր՝ հայ-ադրբեջանական սահմանի այդ հատվածում պատերազմական գործողություններ սանձազերծել: Մարտի 7-ի երեկոյան ադրբեջանական կազմավորումներն էլ մեկ անգամ ներխուժեցին Տավուշի շրջանի տարածք, սակայն մոտ մեկ ժամ տեւած մարտերից հետո կրկին դուրս շրջվեցին: Նույն երեկոյան ուժգին գնդակոծության են թարկվեցին Կրասնոսելսկի շրջանի Վահան, Տավուշի շրջանի Մոխես, Այգեձոր եւ Չինարի գյուղերի հայկական դիրքերը: Կռվի դաշտից միայն պատասխան հատուկ գործողություններից հետո: Հաջորդ երեկոյան նույնը կրկնվեց, այն տարբերությամբ միայն, որ գնդակոծության տակ հայտնված գյուղերի շարքում ավելացան Տավուշի շրջանի Ներքին Կարմիրաղբյուրն ու Նոյեմբերյանի շրջանի Դովեղը:

Տես էջ 8

■ *Էստոնիաների բարեխնամ ուսուցիչ միայն ողորմելիք: Հայաստանի թղթակից «Սնարք» գործակալության թղթակցին տեղեկացրել են, որ վատչեր ուսուցողների ընդհանուր թվից, որը կազմում է 3 մլն 436651 մարդ, մարտի 13-ի տվյալներով, սեռախտանաշնորհման սերտիֆիկատ է ստացել 3 մլն 72312 հոգի: Մայրաքաղաք Երեւանում 1 մլն 157000 քաղաքացի վատչեր է ստացել 976000-ը:*

ՍՆՄԲ

ԱՆՑՈՒԴԱՐՁ

«Նորքի» ու «Մարզաշխարհը» չեն վերաբացվի, մինչեւ որոշում չլինի

Չնայած մամուլում եղած հայտարարություններին, «Նորք» եւ «Մարզաշխարհ» դարբերական աշխատանքը չի վերսկսվել: Ընդ որում, նախագահի մամուլի քարտուղար Լեւոն Զորաբյանը հայտնեց, որ նախագահի մամուլի ծառայությանը վերաբերվող հայտարարությունները թյուրիմացության արդյունք են, իսկ արդարադատության նախարարության լրատվության միջոցների զրանցման վարչության պետ Էդվարդ Մեհրաբյանը նշեց, թե իրենք այդ հարցի հետ ոչ մի առնչություն չեն ունեցել: Այդ հարցով դիմած լրագրողներին ասվել է, թե իրենք ի հենց ուսեռը կարող են պաշտպանել օրենքով սահմանված կարգով: Որեւէ որոշում փակված բերքերի վերաբացման կամ նույնիսկ փակման մասին արդարադատության նախարարությունը չի կայացրել: Այդ մասին հաստատեց նաեւ «Նորքի» խմբագիր Ռոբերտ Հովսեփյանը, նշելով, որ ինքը պաշտպանում «Նորքի» գործունեության վերականգնման մասին ոչ մի որոշում չի ստացել:

«Վան» բանկը լուծարված

Ինչպես հայտնեցին ՀՀ ԿԲ լրատվական կենտրոնից, մարտի 10-ին կայացած նիստում ՀՀ ԿԲ վարչությունը, հաշվի առնելով «Վան» առեւտրային բաժնետիրական բանկի խորհրդի որոշումը բանկի գործունեության դադարեցման եւ լուծարային հանձնաժողովի ստեղծման մասին, որոշել է անվավեր ճանաչել «Վան» առեւտրային բաժնետիրական բանկի բանկային գործունեության իրականացնելու թիվ 613 արտոնագիրը, տրված 1993 թ. հոկտեմբերի 23-ին:

ԼՏ

Ղարաբաղի երկաթուղին մարդասիրական միջանցք

Մարտի 10-ին բարեկամական «Միլլիյեթ» թերթը գրում է, որ հայերի ու ադրբեջանցիների միջեւ Թբիլիսիում կնքվել է համաձայնագիր Լեռնային Ղարաբաղի երկաթուղին բացելու առթիվ: Թերթը գրում է, որ հայ եւ ադրբեջանցի լիազորներ Վրաստանի մայրաքաղաքում որոշեցին Լեռնային Ղարաբաղի տարածքով մարդասիրական օգնության միջանցք բացել: «Այս հանձնարարությունը նեղկա է գտնվել Եվրոպական միության Թբիլիսիի ներկայացուցիչ Մարի Փիրոսը: Չնայած թերթը համաձայնությամբ, որեւ է բացվի Լեռնային Ղարաբաղի երկաթուղին եւ այս նոտայով որեւ է հատկացվի երկու գնացք 200 վագոնով: Դեռեւս հայտնի չէ, թե որոշումը երբ կիրագործվի», գրում է թերթը, առանց նշելու, թե վարարդամիջոցներն ում կողմից որեւ է հատկացվեն:

ԼՏ

ՄՈՍԿՎԱ

Վոլոդյա տղան կշտկի Նիկոլայ Բ-ի եւ մյուսների սխալները

«Ազգի» թղթակից Լուսիկ Ղուկասյանի հարցազրույցը Վլադիմիր Ժիրինովսկու հետ

Վլադիմիր Ժիրինովսկին ծնվել է 1946 թ. ապրիլի 25-ին, Ղազախստանի մայրաքաղաք Ալմա Արայում: Նա գերազանց ավարտել է Մոսկվայի պետհամալսարանի իրավաբանական ֆակուլտետը եւ նույն համալսարանին առընթեր Ասիայի եւ Աֆրիկայի երկրների ինստիտուտը: Տիրապետում է 4 օտար լեզվի, այդ թվում թուրքերենին:

1990 թ. հիմնեց եւ մինչեւ օրս գլխավորում է լիբերալ դեմոկրատական կուսակցությունը, որի հարթակը 1993 թ. խորհրդարանական ընտրություններում ցնցեց բոլորին, բայց ոչ Ժիրինովսկուն, որը փաստորեն ստույգ կանխատեսել էր ԱԼԴԿ-ի օգտին հնարված ընտրությունների թիվը: Նա վստահ է, որ այս տարվա դեկտեմբերին կայանալիք խորհրդարանական հաջորդ ընտրություններում, «եթե դրանք ազատ լինեն», կոմունիստները կարող են ստանալ 20-25 տոկոս, բոլոր ժողովրդավարները միասին 10-15 տոկոս, իսկ հվեների 40 տոկոսից ավելին կստանա իր կուսակցությունը: Նա նաեւ վստահ է, որ նախագահական ընտրություններում ինքը կհաղթի: 1991 թ. նա առաջին անգամ հվեարկվել էր ՌԽՖՍՀ նախագահության համար, այն ժամանակ ստանալով հվեների գրեթե մեկ տասներորդը:



Բեռնատարի տանիքից, որտեղից սկսել էր իր ելույթները քաղաքական կարիերայի սկզբում, Ժիրինովսկին հասել է Պետդումայի 10-դ հարկում գտնվող շեղ սրահները: Ներկայումս նա անթերի հագնվում է եւ երթեւեկում «Վոլվոներով» ու «Մերսեդեսներով»: Անփոփոխ են մնացել միայն իրեն բնորոշ անկեղծությունը, կոնկրետությունը, տարեբերությունը եւ սուր միտքը բուռնոս լեզվի հետ մեկտեղ: Հենց այդպես էլ նա իրեն դրսեւորեց հայ մամուլին առաջին անգամ տված այս հարցազրույցում:

Տես էջ 3

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Եթերը իրոք փակ է էջմիածնականների առաջ

Մակայն պարզվում է՝ միայն 1 ամսով

Մեր թերթի մարտի 11-ի համարում «Եթերը փակ է էջմիածնական եկեղեցականների համար» հարցական վերնագրով լրատվության մեջ տեղեկացրել էինք, թե մարտի 9-ին եթեր չի հեռարձակվել Ռոբերտ Մավիսակյանի «Հինգշաբթի» ծրագիրը՝ Արարատյան Հայրենադարձական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանի եւ Մ. Նահանգների Արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանի մասնակցությամբ, ավելացնելով, որ այն արգելվել է հեռուստառադիոդեկոմի վարչության ղեկի տեղակալ Վահրամ Մարտիրոսյանի կողմից, որը, ըստ մեր ունեցած տվյալների, ՀՀՇ-ից է գործուղվել հեռուստատեսություն եւ իրականացնում է հաղթական վերահսկողությունը:

Երեկ ստացանք պրն. Մարտիրոսյանի նամակը՝ ուղղված խմբագրությանս, որտեղ ասվում է, թե ծրագրի եթեր չհեռարձակվելու մասին մեր տված տեղեկատվությունը համապատասխանում է իրականությանը, սակայն իրականությանը չի համապատասխանում մեր այն մեկնաբանությունը, թե արգելքը պայմանավորված է եղել կաթողիկոսական ընտրությունների վերաբերյալ ՀՀ նախագահի վերջին հարցազրույցով, եւ իր կողմից բացատրում է. «Խնդիրն այն է, գրում է պրն. Մարտիրոսյանը, որ բազմադարյան ընդմիջումից հետո առաջին անգամ է կաթողիկոսի ընտրությունն անցկացվում Հայաստանի անկախ պետության մեջ, առաջին անգամ է կաթողիկոս ընտրվում ազատ մամուլի ու զանգվածային լրատվության էլեկտրոնային միջոցների գոյության պայմաններում»: «Վազգեն Ա-ի մահվանը հաջորդած ամիսները ցույց տվեցին, շարունակում է վարչության պետի տեղակալը, որ կաթողիկոսության որոշ թեկնածուներ նոպատակասլաց ընտրարշավ են ծավալել՝ ներթափանցելով նաեւ մեր մի շարք հեռուստաձրագրեր»: Հետեւաբար, գրում է նա, «ՀՀ հեռուստառադիոդեվարչության ղեկավարությունը որոշեց կաթողիկոսի ընտրությունից մեկ ամիս առաջ դադարեցնել եթեր տրամադրելը *բոլոր* (ընդգծումն իրն է, խմբ.) հնարավոր թեկնածուներին, որպեսզի նրանցից «ոչ ձեռներեցները» չհայտնվեն անոպատաս դրության մեջ»:

Ուրեմն՝ հեռուստառադիոդեկոմի վարչության պետի տեղակալը հաստատում է մեր տված տեղեկության առնվազն 2 կետ. առաջին՝ որ իրոք եթերը փակվել է էջմիածնականների առաջ, եւ երկրորդ՝ արգելքն իրոք կապված է կաթողիկոսական առաջիկա ընտրությունների հետ: Միաժամանակ նա ակամայից հաստատում է նաեւ մեր լրատվության գլխավոր շեշտադրումը՝ *էջմիածնական* եկեղեցականների դեմ դրված արգելքը, քանի որ «Հինգշաբթի» ծրագրի արգելման օրվանից ի վեր եթերում ամեն օր շարունակվում է Անթիլիասի կաթողիկոս Գարեգին Բ-ի ընտրարշավը, եւ ըստ երեւույթին շարունակվելու է անընդմեջ՝ մինչեւ ապրիլի 3-ը: «Բոլոր» բառն ըստ երեւույթին վերաբերում է միայն էջմիածնականներին, իսկ անթիլիասյան թեկնածուին՝ ոչ:

Վերջում պրն. Մարտիրոսյանը պնդում է, թե ոչ ոք իրեն չի գործուղել հեռուստատեսություն եւ սպառնում, որ «մյուս անգամ» չի ալարի եւ դաստի կտա «Ազգ» թերթին՝ իր «հաստատելի անգամ» չեղած հայտարարությունները ուղարկելու համար»: Անշուշտ, մենք իրեղեն ապացույցներ չունենք հաստատելու մեր ասածը, հետեւաբար երկրորդ անգամ փորձության չենք ենթարկի մեզ եւ պրն. Մարտիրոսյանի ալարկոտությունը: Ընդհակառակը, դատելով նրա նամակում շարադրված փաստերից, կարող ենք հաստատապես պնդել, որ ՀՀՇ-ն իսկի կարիք չուներ նրան հատուկ գործուղելու, նա ինքնաբուխ է անում եթերի վերահսկողությունը:

ԱՅԺ

Ռուսաստանի սահմանապահ զորախումբը հսկում է Արաքսի ափը

Սահմանապահները հիմնական մասը Իրանից փախած փոխարեն են

Ռուսաստանի Դաշնության կովկասյան հատուկ սահմանապահ օկրուգի «Հայաստան» զորախմբի որբաթ օր կազմակերպած բաց դռների օր սկսվեց Երեւանում տեղակայված զորամասից: Զորախմբի հրամանատար գեներալ-մայոր Միխայել Հովհաննիսյանը նախ ծանոթացրեց իրենց աշխատանքի հիմնական ուղղություններին (այդ մասին արդեն գրել ենք մեր նախորդ համարում-Հ.Ա.), ապա լրագրողներին հրավիրեց Արտաշատի սահմանային ջոկաս մոտիկից տեսնելու սահմանապահների առօրյան: Թերեւս առաջին անգամ լրագրողների առջեւ բացվեցին մինչ այդ փակված «դռներ» ու նաեւ բեմաներ ... Մեզ ուղեկցող տղաներն ու ենթասպաները առանց կաշկանդվածության դասմում էին, կիսվում, կատակում ... «Այստեղ զինվորների եւ տեղացիների հարաբերությունները նորմալ են, կամաց-կամաց վերականգնվում է այն համագործակցությունը, որ կար նախկին Խ. Միության տարիներին», ասաց Արտաշատի սահմանապահ ջոկատի պետ, գնդապետ Սերգեյ Կոլբինը: Դրա վկայությունն է նաեւ այն, որ շատ սահմանախախտների բռնում են հենց տեղացիները: Այդպես պատահեց նաեւ 6-րդ ուղեկալում, որ դաշտում աշխատող գյուղացիները բռնեցին Թուրքիայի կողմից սահմանը խախտող զինվորին, որը փախել էր զինվորական ծառայությունից, անցնելով հայ-թուրքական սահմանը:

Ընդհանուր առմամբ, գնդապետ Կոլբինի ասելով, տեղացիների ուժերով կանխվել է փախուստների 50 տոկոսը: Թուրքիայի կողմից սահմանախախտները հիմնականում Իրանից փախած փոխարեն են, որոնք ցանկանում են քաղաքական ապաստան ստանալ: Արտաշատի սահմանապահ ջոկատում այս տարի բռնվել են երեք հոգի, որոնցից երկուսը ունեցել են հոգեկան խանգարում, իսկ երրորդի գործերը դեռեւս ուսումնասիրվում են: 1994-ին սահմանային 47 խախտումներից Հայաստանի կողմից միայն 11-ն է եղել:

Սահմանապահ ուղեկալում ամեն ինչ մաքուր էր: Կոյուղն ու դաստաները մնացել էին նույնը. «Թուրքիան ագրեսիվ ՆԱՏՕ-ի ակտիվ անդամն է», «Դու գտնվում ես կապիտալիստական Թուրքիա ոլորտության սահմանում»: Կար նաեւ նորը. «Հայրենիքի պաշտպանությունը Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների պարտքն ու պարտականությունն է»:

Տվյալ դեպքում հայրենիքը երեսի ընկալվում է իբրեւ ԱՊՀ-ի սահման: Դա հաստատեց նաեւ գնդապետը, նշելով, որ այստեղ Ռուսաստանն իր շահերն ունի:

Գնդապետ Սերգեյ Կոլբինի ասելով, իրենք հետեւում են Թուրքիայի սահմանապահների առօրյան: Թերեւս առաջին անգամ լրագրողների առջեւ բացվեցին մինչ այդ փակված «դռներ» ու նաեւ բեմաներ ... Մեզ ուղեկցող տղաներն ու ենթասպաները առանց կաշկանդվածության դասմում էին, կիսվում, կատակում ... «Այստեղ զինվորների եւ տեղացիների հարաբերությունները նորմալ են, կամաց-կամաց վերականգնվում է այն համագործակցությունը, որ կար նախկին Խ. Միության տարիներին», ասաց Արտաշատի սահմանապահ ջոկատի պետ, գնդապետ Սերգեյ Կոլբինը: Դրա վկայությունն է նաեւ այն, որ շատ սահմանախախտների բռնում են հենց տեղացիները: Այդպես պատահեց նաեւ 6-րդ ուղեկալում, որ դաշտում աշխատող գյուղացիները բռնեցին Թուրքիայի կողմից սահմանը խախտող զինվորին, որը փախել էր զինվորական ծառայությունից, անցնելով հայ-թուրքական սահմանը:

Ընդհանուր առմամբ, գնդապետ Կոլբինի ասելով, տեղացիների ուժերով կանխվել է փախուստների 50 տոկոսը: Թուրքիայի կողմից սահմանախախտները հիմնականում Իրանից փախած փոխարեն են, որոնք ցանկանում են քաղաքական ապաստան ստանալ: Արտաշատի սահմանապահ ջոկատում այս տարի բռնվել են երեք հոգի, որոնցից երկուսը ունեցել են հոգեկան խանգարում, իսկ երրորդի գործերը դեռեւս ուսումնասիրվում են: 1994-ին սահմանային 47 խախտումներից Հայաստանի կողմից միայն 11-ն է եղել:

Սահմանապահ ուղեկալում ամեն ինչ մաքուր էր: Կոյուղն ու դաստաները մնացել էին նույնը. Արտաշատի սահմանապահ ջոկատում ծառայող հայերի եւ ռուսաստանցիների թիվը գրեթե հավասար է: Նրանք, ովքեր ցանկանում են ծառայել, կարող են դիմել զորախմբի ղեկավարությանը, որն էլ իր հերթին ընտրություն է կատարում, հաշվի առնելով ռուսերենի իմացությունը եւ դիմողի դաստիարակությունը: Ծառայող հայերն ստանում են 8 հազար ռուբլի, ինչպես Ռուսաստանի տարածքում ծառայող ռուսները, մինչդեռ Ռուսաստանի քաղաքացի զինվորները ստանում են՝ մինչեւ 220-250 հազար ռուբլի:

Ծառայության պայմանները նույնպես նորմալ են: Եւ զորանոցներ. եւ բուժկետ մաքուր վիճակում էին: Հացաթխման արտադրամասում թխված հացը, որից մենք նույնպես համտես արեցինք, չէր զիջում երեւանյան հացատեսակներին: Ի դեպ, սենդվիչների հիմնական մասը ստացվում է Ռուսաստանից: Դպրոցում, ուր սովորում են տղաների մոտ 90 երեխաներ, բոլոր դասերը անցկացվում էին ռուսերեն, Ռուսաստանից ստացված դասագրքերով: Հայրենիքի ուսուցումը տարվում է ֆակուլտատիվ ձեւով:

Այնուհետեւ մեզ տղաները էր այցելություն 7-րդ սահմանային ուղեկալ, ուր զինվորները ոչ միայն սահմանված ժամկետից շատ արձագանքեցին տագնաղ ազդանշանին, այլեւ հիանալի ձեւով կատարեցին սահմանային ուսումնական խախտման «բեմականացումը», ցույց տվեցին սահմանագիծը, որն անցնում է Արաքս գետի մեջտեղով, եւ ջերմ հյուրընկալությունից հետո, ճանապարհեցինք ուսումնասիրական կենտրոն, ուր, ցուցադրված զենքերին ծանոթանալուց հետո, լրագրողներին հնարավորություն տվեց կրակել զենքի տարբեր տեսակներից: Շատերն ուղղակի իրենց տարերքի մեջ էին: Ջոկատի հետ ծանոթությունն ավարտվեց դաշտային վրանում, զինվորական ճաշի սեղանի շուրջ, որտեղ էլ որոշվեց, որ նման հանդիպումներն այսուհետ կդառնան ավանդական:

ՀԱԿՈԲ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

ԱԺՄ-ի հանդիպումը Գյումրիում

Գյումրիում մարտի 11-ին կազմակերպվեց հանդիպում ԱԺՄ վարչության անդամներ, ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավորներ Վազգեն Մանուկյանի, Արշակ Սադոյանի եւ Սեյրան Ավագյանի հետ, որը տեղի ունեցավ նախկին «Հայաստան» կինոթատրոնի նախասրահում հարմարեցված ոչ մեծ, բայց լեփ-լեցուն դահլիճում: Սկզբում Վազգեն Մանուկյանը նշեց, որ այս այցի անմիջական նպատակները երկուսն են. մոտիկից ծանոթանալ Գյումրիի այսօրվա հիմնահարցերին, որոնց մասին դժվար է լիարժեք պատկերացում ունենալ Երեւանում նստած, եւ երկրորդ՝ տեղեկացնել, թե Հայաստանի ներկայի ու ապագայի մասին ինչ է մտածում իրենց կուսակցությունը: Առավորապես այս եւ ընտրություններին վերաբերող հարցերի շուրջ էլ ծավալվեց խոսակցություն:

Վազգեն Մանուկյանը, հանրապետությունում տիրող վիճակի համար ենթադրելով ներկա իշխանությունների, միաժամանակ ծայրահեղություն համարեց ընդդիմության կողմից ամեն ինչի մեղքը իշխանությունների վրա գցելը: Ըստ հոդվածի, եթե մեզանում բռնություն ու անօրինականություն է թույլ տրվում (օրինակ մարդկանց փողոցից գոռով բռնել-բանակ տանելը կամ մի մասին այդ նույնից փողով ազատելը), ինքը դրա համար իրեն մեղավոր չի զգում, բայց պատասխանատու զգում է:

Արշակ Սադոյանը, մասնավորապես նշելով, թե Գյումրիում մարդկանց վիճակը շատ ավելի վատ է, խոսեց ընտրությունների միջոցով ներկա իշխանություններ փոխելու անհրաժեշտության մասին եւ ասաց, որ եկել է վճռական պահը: Սակայն բավականին անստանալի հնչեց նրա «երբ ոչ արյուն բափելով, գոնե ընտրություններով ...» բանաձեւումը: Իզուր չէր, որ դահլիճից անմիջապես հնչեց սպավիրող հարցը, որին պատասխանեց Սադոյանը վտրձեց հանգստացնող պատասխան տալ:

Սեյրան Ավագյանի խոսքում կարեւոր տեղ էր տրված այն գաղափարին, որ եթե ժողովուրդը չի կազմակերպվում եւ վերցնում իշխանությունը, ապա նույնիսկ հանցագործ աշխարհը, կլանային աշխարհը կարող է դրան տիրանալ, ուստի մենք պետք է այսօր այդ կազմակերպման խնդիրը լուծենք: Հոդվածի կարծիքով, ժողովրդի կողմից իշխանությունը վերցնելու մի ձեւ կա՝ կուսակցությունները: «Մտքի կուսակցություններ, հետո պայքարել իշխանության համար», ասաց Մ. Ավագյանը, ավելացնելով, որ այսօրվա իշխանությունները, աշխատելով բալացնել կուսակցություններ, դրանով ստեղծում են վաղվա Հայաստանի ողբերգությունը: Պարոն Ավագյանն իր հերթին շեշտեց, որ Հայաստանը մենակ ու մեկուսացած չի կարող հետ լուծել ոչ երկրի բուն գոյությունն ապահովելու, ոչ Ղարաբաղի, ոչ ադեշի գոտու խնդիրները:

ԳԵՂԱՄ ՄԱՐՏՈՅԱՆ

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ

Դեմիրելի եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի «ոտքի վրա» հանդիպումը

Ստամբուլի «Մարմարա» օրաթերթից «Նոյյան տաղան» գործակալությանը հաղորդում են, որ մարտի 13-ին թուրքական որոշ թերթեր մի քանի տողով նշում են, որ Կոպենհագենում Թուրքիայի նախագահ Դեմիրելը «ոտքի վրա» հանդիպում է ունեցել Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ: Այս լուրը «Յուրրիյեթի» մեջ ամփոփված է «Հայրական հանձնարարություն՝ հայերին» խորագրի տակ: Դեմիրելը, որն իր երկրում հորջորջվում է «պապա» անունով, Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ ունեցած իր հանդիպման ավարտից հետո ասել է, որ ինքը որոշ առաջարկություններ է արել Լ. Տեր-Պետրոսյանին: Նա իբր ասել է, որ հայադրբեջանական պատերազմն արգելք է հանդիսանում դեպի Միջին Ասիա Թուրքիայի ծավալմանը, եւ բացի դրանից, ուշացնում է նավթատար խողովակի անցկացումը: Սուլեյման Դեմիրելը նշել է, որ եթե Ադրբեջանի հետ բոլոր հարցերը կարգավորվեն՝ Թուրքիան ըստ ամենայնի կօգնի Հայաստանին: «Մի՞թե վատ կլինի, եթե նավթատար խողովակը ծեր երկրով անցնի», ասել է Դեմիրելը: ԵՏ

ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ

Կաթողիկոսական տեղապահը Սյունիքում

Մարտի 11-12-ը Գորիսում էր գտնվում Ամենայն Հայոց կաթողիկոսական տեղապահ Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը: Գորիս հասնելու ճանապարհին նա կանգառներ ունեցավ եղեգնաձորում, Վայքում, Սիսիանում, Սյունյաց հոգեւոր թեմի առաջնորդ Աբրահամ վարդապետ Մկրտչյանի ուղեկցությամբ այցելեց եկեղեցիներ, հետաքրքրվեց հոգեւոր գործերով: Կաթողիկոսական տեղապահը եղավ Տաթեւի վանքում եւ հույս հայտնեց, որ վանքի բարեկարգման աշխատանքները կվերսկսվեն: Գորիսում նա հանդիպեց քաղաքային իշխանության ներկայացուցիչների հետ, եղավ կրթօջախներում, ծանոթացավ Գորիսի Սուրբ Լուսավորիչ եկեղեցու վերանորոգման եւ գմբեթի կառուցման աշխատանքներին, այցելեց Սյունյաց հոգեւոր թեմի առաջնորդարանում գտնվող նորաբաց բարեգործական Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ճաշարանը, որը գործում է հայ եկեղեցու ԱՄՆ-ի առեւելյան թեմի հովանու ներքո: Չնայած ժամանակի սղությանը, տեղապահը հասցրեց ունկնդրել երկամյա դադարից հետո վերստեղծված հոգեւոր երգչախմբի ձայնը: Մարտի 12-ի կեսօրին Ամենայն Հայոց կաթողիկոսական տեղապահը Գորիսից ուղեւորվեց Կաղան եւ Մեղրի: Սյունիքում շրջագայելու ընթացքում նրան ուղեկցում էր ՀՕԾ-ի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Ռոյ Քելեբյանը:

ՍԵՐԳԵՅ ՀԱՍՈՎԵՐԳՅԱՆ

■ *Երեք օր առաջ եղանակի տեսության: ՀՀ կառավարությանն արքեր «Հայինֆորմնետ» հիդրոօդերեւութաբանության վարչությունից «Նոյյան տաղան» գործակալությանը հաղորդել են, որ արդեն երրորդ օրն է (մարտի 11-ից 13-ը), ինչ էլեկտրաէներգիայի բացակայության պատճառով վարչությունը եղանակի վերաբերյալ տեղեկություն չի ստանում:* ԵՏ

ՌԱՍԿԱՎԱՐ ԱԶԱՏԱՊԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության է տալիս
Գլխավոր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Խմբ 562941 AT&T (7 8852) 151065
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Տնօրէն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
A STYLE հանակարգչային
ծառայութիւն / 581841
Ոճը եւ տարածները ՊՈՒԵԼ ԴԱԼԼԱԲԵՍԻԻ
Apple Macintosh
հանակարգչային շարուածը
«Ազգ» թերթի
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

հարցազրույց

Սկիզբը էջ 1

- Պարոն Ժիրինովսկի, եկեք խոսենք մոլորակի այն մասի մասին, որտեղ գտնվում է Հայաստանը: Հաճախ ասում են, որ այս շրջանում բախվում են աշխարհաքաղաքական շահեր: Ձեր կարծիքով, ի՞նչ շահեր են դրանք եւ ո՞ւմ է դրանց էությունը:

- Այդ շրջանում բախվում են արեւելասլավոնական եւ մահմեդական աշխարհների շահերը, սա մեկ, արեւմտյան քրիստոնեական աշխարհի եւ մահմեդական աշխարհի շահերը, սա երկու, քրդական խնդիրը, երեք, Թուրքիայի ու Ռուսաստանի դիմակայությունը, չորս: Դա ՆԱՏՕ-ի հարավային բեւեռ է, զուտ ռազմական կողմ, սա հինգ. Անդրկովկասում ազդեցության համար Իրանի եւ Թուրքիայի հակամարտություն, վեց, դարձյալ այդ շրջանում ազդեցության համար Թուրքիայի եւ, ի դեմս Սաուդյան Արաբիայի, արաբական աշխարհի հակամարտություն, սա յոթ, նավթային շահեր, ութ, եւ զուտ հայկական շահեր, ինը:

Դա առավել դայթուղավանգ եւ հակամարտություններով գերհագեցած շրջանն է, որտեղ անչափ շատ բան է միահյուսվել: Ուստի այնտեղ միշտ պատերազմներ են մղվել. այնտեղ կռվել են թե՛ Ռուսաստանը, թե՛ Թուրքիան, թե՛ անգլիացիները եւ թե՛ դարսիկները: Դա հակամարտության հավերժական շրջան է: Ամերիկացիները չեն կարողանա այնտեղ կայունություն ապահովել: Եթե ռուսներն այնտեղից հեռանան, այնտեղ կդառնա Աֆղանստան: Եւրոպախմբերը կնստեն իրար դեմ: Եթե թուրքերն այնտեղ մտնեն, բոլորին կնորբեն: Հիշեցեք, թե թուրքերն ինչպես եկան Փոքր Ասիա, բարբարոսաբար գրավեցին Կոստանդնուպոլիսը եւ կոտորեցին, մորթեցին, հնազանդեցրին այնտեղ ապրող բոլոր ժողովուրդներին, թե ինչպես 1915 թ. երեք գիշերվա ընթացքում 1,5 միլիոն հայ կոտորեցին: Ո՞վ կվճարի բյուզանդական մշակույթի, սլավոն ժողովուրդների նկատմամբ կատարված խժդժությունների դիմաց: Թուրքերը նույնիսկ չարիք են պատճառել մարդկությանը, որքան գերմանացիները: Ֆաշիստական վարչակարգը սպանեց 50 միլիոն մարդ, իսկ 17 միլիոնանոց թուրք ժողովուրդը ոչնչացրեց 1,5 միլիոն հայ: Համամասնությունը նույնն է: Բայց գերմանացիների նկատմամբ դատավարություն եղավ, իսկ թուրքերը որեւէ մեկի կողմից չեն պատժվել: Ստացվում է այնպես, որ հայերին կարելի է ոչնչացնել, բանի որ նրանք փոքր ժողովուրդ են: Իսկ ահա անգլիացիների, ֆրանսիացիների, ռուսների ոչնչացման համար կդատեն: Ուստի Ռուսաստանը պատմական առաքելություն ունի:

Իհարկե, մեզ հուսախաբ արեցին բուշեւիկները: Եթե նրանք չլինեին, մենք կունենայինք երեւանի, Թիֆլիսի նահանգներ եւ այլն, եւ զարգացումը կընթանար այլ ուղիով: Բայց հիմա իրավիճակն այնպիսին է, որ հարկավոր է վերադառնալ հին տարբերակին: եւ այստեղ, Ռուսաստանի շահերը պահանջում են աջակցել Հայաստանին եւ օժանդակել հրդերին:

- Հայաստանի նկատմամբ այդ ա՞ջակցությունն ինչո՞վ կարտահայտվի:

- Մեզ ձեռնտու է դաշնակից ունենալ ի դեմս քրիստոնեական պետության, որը մեզ պարսական կլինի այն բանի համար, որ մեր օգնությամբ կվերականգնի իր պատմական սահմանները: Ընդհանուր առմամբ կարծում եմ, Հայաստանը պետք է տարածվի Սեւ ծովից մինչեւ Կասպից ծով: Անվազ: Նա կարող է Կասպից ծով դուրս գալ Ջուլֆա Լենինարանի շրջանում եւ արդա ավելի հյուսիս՝ դեպի Բաքու: Նա իրավունք ունի հետ սպանալ Արարատ լեռը, Կարսը, Արդահանը եւ Սեւ ծովի ափ դուրս գալ Սամսուն-Տրապիզոնի շրջանում: Իսկ Դիարբեքիր մայրաքաղաքով քրդական պետության ստեղծումից հետո Հայաստանը կկարողանար Սեւանի հաղորդի շրջանում նեղ շերտով դուրս գալ Միջերկրական ծով: Դե, Անկարայում փոքր ինչ դժգոհ կլինեն: Վերջին հաշվով բարեբախտաբար Սամբուլ են եկել Տաքենդի կողմերից, եւ Տաքենդը կմնա այն հաղարը, ուր նրանք կարող են վերադառնալ: Դա նրանց հայրենիքն է: Կամ էլ կարող են մնալ այնտեղ, որտեղ հիմա ապրում են: Բայց չպետք է ճնշեն հայերին, քրդերին:

Ռուսաստանը պետք է քրդերին ազատագրի, որպեսզի իրենց պետությունն ստեղծեն Թուրքիայի տարածքում եւ ոչ թե Իրանում կամ Իրաքում:

- Ինչո՞ւ:

- Այդ դեպքում մենք կնվաճենք Իրանի եւ Իրաքի համակրանքը: Մեզ համար դժվար է միանգամից դիմակայել այդ երեք պետություններին: Սալինի սխալն այն էր, որ նա երկրորդ աշխարհամարտից հետո չպատժեց Թուրքիային, որը բռնել էր ֆաշիստական Գերմանիայի կողմը: Բայց այժմ Թուրքիան կարող է «խավության նոխազ» լինել այդ շրջանում: Նրա պարտությունը կուզենային թե Իրանը, թե Իրաքը, թե հայերը, թե քրդերը եւ թե Ռուսաստան կայդերը: Բայց մեզ մոտ բազմաթիվ ժողովուրդներ ուզում էին փորձել իրենց նուրույնությունը: Ահա եւ նրանք այն սպացան արյան, բռնության, պատերազմի միջոցով: Եւ եթե այսօր Անդրկովկասում հանգիստ անցկացնեն, ապա մենք կասեն. «Վերադարձ դեպի Ռուսաստան, ամեն դայմանով»: Ամեն դայմանով: ԽՍՀՄ-ի վերականգնում հանրապետությունների միության տեսքով, ոչ անդայման խորհրդային: Կամ էլ կարելի է մտնել Ռուսաստանի կազմի մեջ որպես նահանգ, ինչպես դա պատրաստ է անել Տաջիկստանը (Դուշանբեի նահանգ), քանզի հենց որ այն տեղից հեռանա ռուսական դիվիզիան, այնտեղ ոչինչ չի մնա, կլինի կոտորած:

Այսօր Արեւմուտքին ձեռնտու է Ռուսաստանին կռվեցնել հարավի՝ մահմեդական, արաբական տարածաշրջանի հետ, որպեսզի ինքն օգտագործի հարստությունները, խլի տարածքի մեծ մասը: Սա գաղութային պատերազմի նոր ձեւ է: Իսկ մեզ համար ավելի լավ է նրանց հետ չգժտվել, համաձայնության գալ, մենք ունենք փոխադարձաբար իրար լրացնող տնտեսություններ, փոխշահավետ առեւտուր եւ այլն: Բայց բուն Արեւմուտքում չեն կրակում: Նրանց զինվորները մարտադաշտում չեն. ամեն ինչ արվում է ուրիշի ձեռքով՝ իրանցիները կռվում են իրաքցիների, հայերը՝ ադրբեջանցիների, աբխազները՝ վրացիների հետ եւ այլն: Ժողովուրդներին իրար դեմ՝ են լարում, նրանք կռվում են, նրանց զենք են տալիս, գործում են ամեն տեսակ մարդու: Լավ հաղթականություն է. նստել Լոնդոնում, Վաշինգտոնում կամ Փարիզում եւ դաստել ժողովուրդներին: Արեւմուտքն այսօր հանդես է գալիս որպես դատավոր եւ դրա համար փող է ստանում, մինչ մյուս ժողովուրդները միմյանց հետ հաշիվներ են մաքրում:

-Վլադիմիր Վոլֆովիչ, կարծես թե լսել եմ այն մասին, որ ասղագուակները Ձեր անունը նշում են որպես Ռուսաստանի ապագա կառավարիչ...

- Այդ հեռագրությունները մեր ասղագուակները չեն անցկացրել. մեր կուսակցությունում նրանք չկան: Ամերիկյան «Սիրիուս» ֆիրման եւ ասղագուակ Զարայսկին են, որ պատմական համեմատություններ են անցկացնում մեր ժամանակաշրջանի եւ դարասկզբի միջեւ, հենվելով աստղերի վրա: Այսպես, լիակատար զուգադիպություն գոյություն ունի Գորբաչովի եւ Նիկոլայ Բ-ի, Ելցինի եւ Կերենսկու միջեւ: Համընկնում են բնավորությունները, մանկությունը, ընտանեկան հարաբերությունները, սեխը եւ նույնիսկ կանայք: Եւ, իհարկե, քաղաքական ճակատագրերը: Նիկոլայ Բ-ն իր ժամանակին փլուզեց կայսրությունը, նույնն արեց Գորբաչովը: Ճիշտ է, առաջինին մի քանի տարի անց գնդակահարեցին Ուրալում, իսկ երկրորդը դեռեւս հաղթում է: Ոչ, ոչ, ես ոչնչի կոչ չեմ անում... Իսկ Ելցինը նման է Կերենսկուն. իշխանության գլուխ անցնելու նույն ձեւը խոշոր պետության փլուզումից հետո, նույն դեգերումները: Կերենսկին ճնշեց Կորնիլովի խռովությունը, Ելցինը՝ ԳԿՀՊ-ինը: Հիմա սպասում ենք երրորդին, որը կլսկի նախորդների սխալները: Այդ ժամանակ եկավ Լենինը: Ասղագուակները դա էլ են հաշվարկել... Նույնիսկ ծննդյան օրերով մենք Իլյիչի հետ մոտիկ ենք: Տարիքն էլ է համընկնում. այդ տարիքում Լենինն էլ անցավ իշխանության գլուխ, նա էլ ավարտել էր իրավաբանական ֆակուլտետը. ազգության մասին ասել են, թե գալու է «Վոլոդյա տղան Ասիայից»: Ժողովրդականությամբ էլ նման են. մեր ընտրողները այսօր մեզ դիմավորում են ոչ ավելի վատ, քան 1917 թ. Ֆինլանդական կայարանում իր բանվորները դիմավորել էին Իլյիչին: Հարկավոր է 10-րդ կառավարիչ, որը կլսկի ինը նախորդների սխալները: Մենք կլսկենք ոչ միայն Նիկոլայ Բ-ի, այլեւ մյուս բոլորի սխալները:

Մոսկվա, 9 մարտ, 1995

ՄՈՍԿՎԱ

Վոլոդյա տղան կլսկի Նիկոլայ Բ-ի եւ մյուսների սխալները

«Ազգի» թղթակից Լուսիկ Ղուկասյանի հարցազրույցը Վլադիմիր Ժիրինովսկու հետ

ԵՐԵՎԱՆ

Բաբկեն Արարքյան. «Չլուծված հարցերի համար կարող է արտահերթ նիստերի անհրաժեշտություն առաջանալ»

ԵՐԵՎԱՆ, 13 ՄԱՐՏ, ՄՆԱՐՔ: Այսօր աշխատանքն է վերսկսել ՀՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը: Հերթական նոստրյայի օրակարգում կա ավելի քան 20 հարցադրում: Անավարտ են մնում Գերագույն խորհրդի ընտրությունների մասին օրենքի հոդվածների քննարկումը եւ փոխ առ փոխ ընդունումը: Այս կապակցությամբ խորհրդարանի նախագահ Բաբկեն Արարքյանը հույս է հայտնել, որ մինչեւ մարտի 20-21-ը օրենքը ամբողջովին կընդունվի: Եթե անհրաժեշտություն առաջանա, հաջորդ շաբաթ դադարամավորներ դարձյալ կհրավիրվեն նստաշրջանի արտահերթ նիստի:

Քննարկման ենթակա են 1993 թ. դեկտեմբերի կառուցվածքը եւ 1995 թ. բյուջեի նախագիծը: Այս հարցի օրակարգ մտցնելը տարածաշրջանային առաջ բերեց, որն ըստ երեւույթին, դժվարություններ կհարուցի ընդունման դեպքում:

Նախատեսվում է քննարկել նաեւ Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի նախագիծը. ՀՀ քաղաքացիության մասին օրենքի նախագծերը, ձեռնարկությունների սնանկացման մասին օրենքը եւ այլ հարցեր: Որոշ դադարամավորներ բերանավանդությամբ են հայտնել այն մասին, որ նման ծավալուն փաստաթղթերի քննարկումն ու ընդունումը հնարավոր է կատարել մեկ նոստրյա նիստի ընթացքում: Առավել ես, որ նստաշրջանի նիստերի համար բարենակվում է անդամների խնդիր մնալ հիմարդի հարցը եւ առանձին դադարամավորների անտեղի «բազմաձայնությունը»:

Ընտրական հանձնաժողով ստեղծելու ժամանակ դեռեւս կա

ԵՐԵՎԱՆ, 13 ՄԱՐՏ, ՄՆԱՐՔ: Որոշ լրատվական միջոցների հաղորդումների մեջ այն լուրն է տարածվել, թե Հայաստանի ԳԽ-ն արդեն չի կարող կատարել գործող օրենքի դրանանցը, այն է՝ ձեւավորել խորհրդարանական ընտրությունների Կենտրոնական ընտրական հանձնաժողով նշանակված ժամկետից 115 օրից ոչ պակաս (ինչպես հայտնի է ընտրությունները նախատեսված է անցկացնել այս տարվա հուլիսի 5-ին): Այս կապակցությամբ «Անարխ» գործակալությունն թղթակիցը դարձյալ հարցազրույցներ համար դիմել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Ռոբերտ Ամիրյանին: Նա տեղեկացրեց է, որ հիշյալ լուրը չի համապատասխանում իրականությանը: Գերագույն խորհրդի ընտրությունների ներկայիս օրենքով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ձեւավորման վերջնաժամկետը նշանակված է ընտրությունների անցկացումից 90 օր առաջ, այլ ոչ թե 115 օր առաջ, ինչպես նշված է լրատվական միջոցների տեղեկատվության մեջ: Նոր օրենք առայժմ չի ընդունվել եւ ինչպիսի կարգ կնշվի հետագայում, անորոշ է, նշել է ԿԸՀ-ի նախագահը:

Սիլվա Կապուտիկյան. «Արգելել «Անլռելի զանգակատունը»՝ նշանակում է հեգնել մեր ժողովրդին»

«Անլռելի զանգակատունը» մի ամբողջ ժողովուրդ է զարթնեցրել: Արգելել այն նշանակում է նորից հենցել այս ժողովրդին, մանավանդ հիմա, երբ մենք կորցնում ենք ամեն ինչ տնտեսություն, քաղաքական հեռանկարներ եւ մեր հոյաստությունը», անդրադառնալով օրերս կայացած ասուլիսում լուսավորության նախարարի դաշտանակատար Աշոտ Բլեյանի արած հայտարարություններին «Նոյյան տապան» գործակալության թղթակցին ասաց բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը:

Նրա կարծիքով, հայոց Մեծ ցեղասպանության մասին մանկապարտեզներում լսելու եւ Պարույր Սեւակի լավագույն գործերից մեկը դպրոցական ծրագրերից հանելու հրահանգը հեռուն գնացող նպատակներ ունի: «Այսօր ազգ դարձյալ միայն ոգին է, որին ուզում են հարվածել», հայտարարեց նա: *ԼՏ*

ՀԱՄԱՌՈՏ

ՀՅԴ անդամ Գեորգ Վարդանյանին մեկ տարվա դայմանական բանտարկություն

Մարտի 13-ին Երեքշաբթի շրջանի ժողդատարանը ավարտեց Հայ հեղափոխական դաշնակցության անդամ Գեորգ Վարդանյանի դատաքննությունը, որը ՀՀ ԲՕ բիվ 232 հոդվածով մեղադրվում էր իր տանն ատրճանակի կերդով զինամթերք դահելու մեջ (Գ. Վարդանյանի հոր տանը հայտնաբերվել էր «Մակարով» տիպի ատրճանակի 4 փամփուշտ, նույն ատրճանակի դատյան եւ սուր): Դատարանը դարզեց, որ Վարդանյանը նախկինում չի դատվել, իր խնամքի տակ ունի երեք երեխա, կին, մայր եւ քույր: Հաշվի առնելով մեղմացուցիչ հանգամանքները, դատարանը Վարդանյանին դատապարտեց մեկ տարի դայմանական ժամկետով: *ԼՏ*

Արտգնա նիստ Վանաձորում

Օրերս Վանաձորի քաղաքապետարանում կայացավ ՀՀ առեւտրի նախարարության կոլեգիայի արտգնա նիստ, որը վարում էին առեւտրի նախարար Լեւոն Խաչատրյանը եւ Վանաձորի քաղխորհրդի նախագահ Հովհաննես Մաշինյանը: Քննարկվեցին Վանաձորում առեւտրի վիճակը, նախորդ տարվա համեմատ եղած ցուցանիշները: Ի վերջո, որոշում կայացվեց դիմել քաղխորհրդի նախագահությանը Արդաշի տնօրեն Լեւոն Հովհաննեսին՝ աշխատանքից ազատելու հանձնայնություն ստանալու համար: Որոշվեց աշխատանքից ազատել հասարակական սննդի միավորման տնօրեն Լեւոն Նազարյանին: Իսկ սննդաշի տնօրեն Խաչիկ Իսդիրյանի հարցը կքննարկվի առաջիկայում: *Ս. Ս.*

Նախիջեւանը շրջափակման մեջ

ԲԱՔՈՒ, 13 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ինչպես տեղեկացրել է Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության մշակական ներկայացուցիչ Հասան Զեյնալովը, փետրվարի սկզբից այդ հանրապետությունը հայտնվել է կատարյալ տրանսպորտային շրջափակման մեջ: Ըստ ադրբեջանական լրատվական միջոցների, դրա պատճառն այն է, որ 1995 թ. հունվարից սկսել են 10 դոլլար մաքս գանձել այն բոլոր ավտոմեքենաներից, որոնք հատում են ադրբեջան-իրանական սահմանը երկու ուղղություններով: Արդյունքում ավտոմեքենաների հոսքը կրկնակի նվազել է, այդ բվում այն ավտոմեքենաներինը, որոնք Ադրբեջանի տարածքով Նախիջեւանի Հանրապետություն էին տեղափոխում բեռներ: Երբ իրանական կողմը փետրվարի սկզբից 10 դոլլարանոց նմանօրինակ մի մաքս սահմանեց իր տարածքի վրա, դրանից հետո ոչ մի ավտոմեքենա չհատեց սահմանը: Զեյնալովի խոսքերով, չնայած Ադրբեջանի ադարանի որոշումը չեղյալ հայտարարելու Նախարարների խորհրդի դահանջին, Ասատայի իշխանությունները շարունակում են մաքս գանձել:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Ազգային

Գրիգորիս արք. Բունիաթյան. «Անթիլիասի որեւէ միաբանի բազմելը Լուսավորչի գահին մրցակցության մեջ Անթիլիասի հաղթանակ եւ Ս. Էջմիածնի Աթոռի ներսից գրավում է»

Հնարավո՞ր եք համարում մեր ներեկեղեցական հարցերի լուծումը (Էջմիածին - Անթիլիաս)։ Ի՞նչ ճանապարհով։

- Դոմ ակնարկում եք եկեղեցու ցավոտ հարցերից մեկին։ Ես, անձնապես, այդ հարցը նկատում եմ ոչ թե ներեկեղեցական, այլ միջեկեղեցական։ Դժբախտաբար բոլոր նրանք եկեղեցական թե աշխարհիկ, ովքեր կարծում են, թե Հայ եկեղեցին մեկ է գտնվում են բարեմիտ մոլորության մեջ։ Պետք չէ խուսափել իրականությունը հաստատելուց։ Ի դեմս Անթիլիասի մենք դեմ հանդիման ենք գտնվում մի առանձին եկեղեցու իր ուրույն նվիրատեսությամբ, կառույցով եւ կանոնագրությամբ։ Իրականում գոյություն ունեն դավանանքով մեկ, սակայն երկու առանձին Հայ եկեղեցիներ։

Դավանանքի նույնությունը եկեղեցիների նույնության հատկանիշ չէ։ Օրինակ օրթոդոքս եկեղեցիների Բայց այն ժամանակ չէի դատապարտում, թե ինչ ենք կատարում ազգի առաջ։ Այսօր, երբ ներսից եմ ճանաչում հարցը, տեսնում եմ, որ Անթիլիասում գնալով ձեւավորվում է աղեղն մի հիերարխիա իր առանձին ստրուկտուրայով։ Երբ այդպես շարունակվի. Հայ եկեղեցին եւ ազգը գտնվելու են մի մեծ աղետի առջեւ։ Խնդրում եմ. Դոմ էլ ամեն ինչ փորձեք դրա առաջն առնելու։ Իսկ ես իմ կողմից ոչիչ կատարեմ ամեն բան»։ Գուցե հենց այդ կողմնորոշման համար, կուսակցությունը նրան հետ ամբողջովին մենակացրեց եւ հեռացրեց։

Իրողությունն անժխտելի է։ Սակայն մի բանում, որ սխալվում էին Ամենայն Հայոց կաթողիկոսը եւ միամիտ դուրս։ Խաբանասյանը, այն էր, որ ոչ թե 1956 թ. սկսած Անթիլիասը դարձավ նվիրատեսություն, այլ այն, որ նա ի սկզբանե այդպիսին էր իր հակաթոռության ուժով։ Եթե ներհայկական դատապարտումը բավարար չէ Անթիլիասը նկատելու որպես առանձին եկեղեցի. ապա որեւէ հետաքրքրող կարող է դիմել օտար միջազգային կազմակերպությունների անդամության ցանկերին, որոնց վրա միշտ նշանակված են երկու հայ եկեղեցիներ Էջմիածնի եւ Անթիլիասի։

Եթե Խաբանասյանը այս դարձ ճշմարտությունը հասկացել էր 1960 թ., ապա այսօր բոլոր նրանք, հոգեւորական թե աշխարհիկ, որ դարձել են զգում զբաղվելու եկեղեցական հարցերով, իրավունք չունեն չգիտակցելու այս իրողությունը։ Պատմության ընթացքում, ըստ հանգամանքների, Էջմիածնի եւ Կիլիկիա Աթոռների միջեւ երբեմն տիրել է հոգեւոր հաղորդակցություն, իսկ երբեմն այն խզվել է։ Կիլիկիա կաթողիկոսության գոյության շուրջ 550 տարվա ընթացքում ավելի երկար է Էջմիածնի հետ հարաբերությունների խզման, քան հոգեւոր հաղորդակցության ժամանակահատվածը։ Դրանք հաճախ բնորոշվել են ուղղակի բռնական հարաբերություններով։ Այնքան ժամանակ, որ դեռ այդ Աթոռը կշարունակի իր գոյությունը, ազգը կմնա հոգեպես երկփեղկված։ Այս կողմից միշտ կգտնվեն արտաեկեղեցական ուժեր, որոնք կփորձեն իրենց ազդեցությունը ենթարկել Անթիլիասը եւ այն օգտագործել ի նպաստս իրենց հետաքրքրած շահերի ընդդեմ Էջմիածնի եւ Հայ եկեղեցու։

Այսօր, երբ հայ ժողովուրդը մտել է իր զարգացման մի նոր փուլ, որը բոլոր տեսակետներով քաղաքական, ազգային, հոգեւոր, տանում է դեպի ազգի համահավաքմանը, հայ եկեղեցին չի կարող այդ գործընթացին որեւէ նպաստ բերել երկդիմությամբ կերպարանքով։ Եկեղեցին եւս պետք է դառնա մեկ։

Հարցի լուծման մասին ես ունեմ առանձին տեսակետ, որն այլ առիթով դարձյալ արահայտել եմ։ Դա այն է, որ հակաթոռ կաթողիկոսությունները պատմության տրամաբանությամբ դատապարտված են մահացման։ Նախորդ երկու դարերում ինքնաբերաբար հանգել եւ մահացել են Գանձասարի ու Աղթամարի կաթողիկոսությունները։ Հերթն այժմ Անթիլիասինն է։ Դա միայն ժամանակի հարց է։ Իսկ ավելի գիտակից մի հասարակություն կարող է վարձել դա անել ներազդման ճանապարհով։ Կարծում եմ, որ օր առաջ պետք է սկսվեն այս ուղղությամբ բանակցություններ երկու Աթոռների միջեւ։ Որքան շուտ, այնքան լավ։

- Որո՞նք են հավանական բեկնածուներ կաթողիկոսական ընտրություններում։

- Նախ պետք է տարբերակել բեկնածու եւ հավակնող հասկացություններ։ Թեկնածու են հանդիսանում անխտիր մեր եկեղեցու բոլոր եպիսկոպոսները, արեղիսկոպոսները, որոնք բվով 45 հոգի են։ Իսկ այն մի բանի անձանց, որոնց մասին այս շրջանում հաճախ խոսվում է, պետք է կոչել հավակնորդներ։ Մյուսների հետ համահավասար նրանք եւս որպես բեկնածու կներկայանան միայն Ապրիլի 3-ին։ Իսկ ամեն ինչ կվճռվի պատգամավորների քվեներով։

Կաթողիկոսական աստիճանի բարձր հանգամանքը բեկնածուներից պահանջում է մի շարք արժանիքներ մտավոր կարողություն, բնական ձիրքեր եւ ընդունակություն, զարգացում, գիտելիքներ, վարչական կարողություն, նկարագրի եւ բնավորության մարդկային հատկանիշներ։ Բացի այդ նա պետք է լինի հավատավոր, եկեղեցասեր, արդարության եւ ճշմարտության փնտրող, ուղղամիտ, անշահախնդիր, ինչպես նաեւ նկեղեցու եւ նրա կենտրոն Ս. Էջմիածնի շահերի հանդեպ հավատարիմ եւ նախանձախնդիր անձ։

Նոյիսկոպոսաց դասի 45 անդամների մեջ կան բազմաթիվ անձիրիք, որոնք արժանի են բեկնածության։ Դժբախտաբար, սակայն, հնարավորություններ հավասար չեն։ Որոշ հանգամանքներ, ինչպիսիք են ակնառու վայրում պատշաճավարելը, տնտեսական համեմատաբար լայն միջոցներ, ըստ թեմի բազմամարդության պատգամավորների քանակը, ազդեցիկ շրջանակների, պատշաճ արձնավորությունների հետ ունեցած կապեր, վարած պատշճի հետ կապված ինչ-որ զգացական հանգամանք եւն, եւ որոնցից զուրկ են մյուսներ, ունեցող թույլ են տալիս դրսեւորել ավելի համարձակություն եւ հավակնություն։

Փորձեմ թվարկել եւ ներկայացնել մի քանի հավակնորդների։ •

1. Տեղապահ Թորգոմ արեղիսկոպոսը Երուսաղեմի պատրիարքի իր հանգամանքով առանձնահատուկ դիրք է գրավում ոչ միայն Հայ եկեղեցում, այլ նաեւ միջազգային եկեղեցական եւ քաղաքական ասպարեզում։ Մոտ 50 տարի, որից ավելի քան 30-ը՝ «առաջնորդի հանգամանքով, Մ. Նահանգներում վարած պատշճանների մեջ ցուցաբերել է վարչական կարողություն եւ իրեն դրսեւորել է որպես դարկեաց, նախանձախնդիր եւ գիտակից մտավորական եւ եկեղեցական։ Ստեղծել է լայն կապեր ու հարաբերություններ եւ մանավանդ արտասահմանում, ունի իրեն գնահատող, սիրող եւ նվիրված եկեղեցականների եւ աշխարհականների մեծ թիվ։ Տեղապահության 6 ամիսներին նրան հաջողվել է որոշ չափով կարգավորել Մայր աթոռի վարչա-տնտեսական գործունեությունը, բարեկարգել կենսամատակարարման վիճակը, զբաղվել հոգեւոր եւ կրթական աշխատանքով, հասատել հրատարակչական հարցերի կենտրոն եւ բավարար կերով կազմակերպել ու հսկել առաջիկա Ազգային եկեղեցական ժողովի նախընտրական աշխատանքները։ Նրանստեղ է Սոչիսկում կառուցվող եկեղեցու եւ Տաբեհի վանքի շինարարությունը։ Այս ընթացքում դրսեւորել է սկզբունքայնություն, հետեւողականություն, համբերատարություն, կարողություն եւ քաղաքական գիտակցության նկարագրային գծեր։

2. Ներսես Արք. Պոզարյանը, որը Մայր աթոռի դիվանապետն է, երկար տարիներ ղեկավարած լինելով Հվեյզարիայում եւ Անգլիայում, ճանաչված եւ գնահատված է արտասահմանի լայն շրջանակներում։ Շնորհիվ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի եւ միջեկեղեցական ու միջազգային տարբեր մակարդակների հարաբերությունների, ընդունված հեղինակություն է այդ ոլորտներում։ Նա նույնքան ճանաչված եւ հարգված է Հայաստանում։

3. Գարեգին Արք. Ներսիսյանը երկար տարիներ գրաքննավարած լինելով Հվեյզարիայում եւ Անգլիայում, ճանաչված եւ գնահատված է արտասահմանի լայն շրջանակներում։ Շնորհիվ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի եւ միջեկեղեցական ու միջազգային տարբեր մակարդակների հարաբերությունների, ընդունված հեղինակություն է այդ ոլորտներում։ Նա նույնքան ճանաչված եւ հարգված է Հայաստանում։

Այս հարցի առնչությամբ անհրաժեշտ է, սակայն, կատարել մի քանի ընդգծումներ։ Կաթողիկոսական ընտրությունը իմքնանոյատակ չէ։ Եվ ոչ էլ որեւէ եկեղեցականի փառասիրությանը հագուրդ տալու նպատակ է հետապնդում։ Կաթողիկոսն ընտրվում է հայրենական եւ եկեղեցական բանկագին ավանդներ ստանձնելու նպատակով։ Պահպանելու եւ զարգացնելու դրանք։ Ներկա փուլում մեծ չափով խախտված են մեր հասած եկեղեցական ժառանգության արժեքները։ Իմաստավորված են դրանցից շատերը։ Եկեղեցական սերնդի մեծագույն մասը օժտված չէ ասպարեզի որսհանջած կարգապահությամբ, գիտակցությամբ եւ պատասխանատվության զգացումով։ Անհրաժեշտ է վերականգնել արժեքները եւ վերակազմակերպել եկեղեցին։ Չկա այն հրաշալի միջոցը, որով հնարավոր լիներ անախորդներն մատնացույց անել պետք եղած անձին։ Միակ միջոցն այն է, որ որպես հավակնորդ ներկայանալու համար ձակություն ունեցողները պետք է ներկայացնեն ծրագրեր եւ մատնանշեն դրանք իրականացնելու միջոցները։ Այսպիսով է միայն, որ պատգամավորները հնարավորություն կունենան ճանաչելու բեկնածուներին եւ կողմնորոշվելու։

Երկրորդ վերջին շրջանում եկեղեցում ակնհայտ է այն փաստը, որ կաթողիկոսն իր գործունեությունը բաս հաճույքն է կատարում։ Այս կամ այն հարցով զբաղվելը կամ ոչ թողնված է նրա իրականությանը։ Եկեղեցին համակերպվել է դրա հետ, որից եւ խիստ տուժում է։ Չկա որեւէ նշանխիք, որ նոր կաթողիկոսը նույնը չի շարունակի։ Դրանից խուսափելու համար անհրաժեշտ է, որ Ազգային եկեղեցական ժողովը իր աշխատանքի սկզբում նախ զբաղվի եկեղեցու կացության ամենակնանք, ճշգի առաջնահերթություններ, կազմի ծրագրերի փաթեթ, ապա կատարի ընտրությունը։ Դրանից հետո ժողովը իր առած որոշումների եւ ծրագրերի փաթեթը կհանձնի ի՞ գործադրման նորընտիր կաթողիկոսին, սահմանելով նաեւ ժամկետներ։ Ժողովում անհրաժեշտ է նաեւ, որ ամենակվեն կաթողիկոսի կողքին մնայուն հանձնախմբեր ստեղծելու, կաթողիկոսի հանգստյան կոչվելու տարիքի եւ անհամատասխանության գործունեության դեպքում կաթողիկոսական իշխանությունից զրկելու հարցերը։

Ավարտելու համար այս հարցը, ուզի ուզեի ավելացնել մեկ բան ես։ Դա այն է, որ եկեղեցին հանրության մի կարեւոր մասի նման գիտակից է, թե այս կարճ շրջանում նկատվեցին կաթողիկոսական ընտրության վերաբերյալ չհամապատասխանող ընտրադայրերի եւ քարոզչության կերպեր, եւ անձի պատասխանի երեւույթին մտցնող դրսեւորումներ։ Ցանկալի ոլորտ լիներ, որ դա ժողովրդի մոտ տխուր տարաբերություն եւ հիասթափության առիթ առաջացնելու պատճառ չդառնար։

- Եթե անհամեստ չեմ գտնում, ապացեմ խնդրեմ, դուք հոս բեկնածու ե՞ք, եւ ի՞նչ են Ձեր հնարավորությունները։

- Հարցն ինձ դնում է նորը կարգության մեջ, սակայն, որպեսզի ոչ կեղծ հանեստությամբ հրաժարվեմ պատասխանից, եւ ոչ էլ ինքնահարգություն կատարելու փորձությանն ենթարկվեմ, թույլ տվեք ինձ բարձրաձայնել միայն հասատական, դատասխանով եւ արտահայտել մի հիմնական մտածում։ Երբ մեկն զրում է, որ հասու է բոլոր խնդիրներին եւ իր մեջ գտնում է համարձակություն

digitised by A.R.A.R.@

ում, իրավունք չունի իրեն կրավորական դրսևորելու և չհավակնելու եկեղեցական իր դարաստանությունների կատարումը շարունակելու Հայաստանյայց Եկեղեցու ամենաբարձր ծառայական կոչման հանգամանքով:

– Վերջերս խոսվում է, նույնիսկ դեպքական բարձրագույն մակարդակներում, Մեծի Տանն Կիլիկիո աթոռակալ Գարեգին Բ. կաթողիկոսի բեկնածության մասին: Այս կողմից, որոշ կազմակերպություններ հանրահավաքներ են հրավիրում առաջարկելով այդ բեկնածությունը: Ի՞նչ կարող եք ասել այդ մասին:

– Նախ այդ կազմակերպությունների վարմունքի մասին: Մեր ժողովուրդը եկեղեցու և նրա հարցերի մասին ունի շատ դարաստացում: Բոլորը ինչ որ չափով լսել են, և գոհ են, որ Հայ Եկեղեցին ժողովրդավարական է: Այսինքն, ժողովուրդը մասնակցության բաժին է բերում եկեղեցու կառավարմանը: Այդպես լինելով հանդերձ, դա չի կատարվում տարեայնորեն: Այդ, երբ ժողովուրդը բանիմաց իրազեկությամբ ունենում է որոշակի կարծիք կամ տեսակետ որևէ հարցի մասին, օրենքով ճշված կարգով, հարցին մասնագիտորեն ծանոթ ներկայացուցիչների միջոցով իրավունք ունի այդ կարծիքը հայտնելու հոգևոր բարձր իշխանություններին:

Եկեղեցին չի առաջնորդվում ցույցերի կամ ճնշումների միջոցով դարաստանի ենթարկվելու, կամ անարդար մի վիճակի հետ համակերպվելու վարագծով: Եթե հարցի էությանն անտեղյակ մարդիկ անգամ բարեմտորեն առաջարկում են դրա լուծման ինչ որ տարբերակ, եկեղեցին դարաստոր է նախ բացատրել ճշմարտությունը, ապա նրանց հանձնարարել խնդիրն ուսումնասիրել: Այլապես հնարավոր է, որ մարդիկ ընկնեն բյուրեղացության մեջ և մոլորեցնեն ուրիշներին:

Այս առնչությամբ երկրորդ հարցադրումն այն է, որ ոմանք ենթադրում են, թե Հայաստանում եկեղեցին գործ չի կատարել և եկեղեցական դասն անարժան է: Նման կարծիքը սխալ է, իսկ մոտեցումն անարդար: Առավելաբար Հայաստանում է, որ հալածանքի տասնամյակներին եկեղեցին, եկեղեցականությունը դիմագրավել են երբեմն անտանելի դժվարություններ, և հաղթահարել են դրանք դրական: Շնորհիվ իրենց հավատի և եկեղեցասիրության բաց ու դայծառ է մնացել եկեղեցին և հոգևոր մխիթարություն է մատակարարվել հավատացյալներին: Ժողովուրդը դեռ է գիտակցի ճշմարտությունը, ումից որ նա տեսել և ստացել է հավատը, դեռ է գնահատի և հարգի նրան: Եթե Հայաստանի եկեղեցականությունը նվիրյալ չլիներ, և եկեղեցին այսօր հարատևած դիտի լիներ հայրենի հողի վրա: Դրանում մեծ է նաև ավանդը արտասահմանի մեր եկեղեցական դասի այն հատվածի, որոնք հավատարմորեն Ս. Էջմիածնի կողքին կանգնած, իրենց աղրած երկրներում ամբարտավանելով կամ զորացվելով որպես հավատավոր գործակալներ համարձակորեն և նվիրումով մասնակցել են մայր հայրենիքում հոգևոր կյանքի վերելքին: Անցյալի հալածանքներն ու դժվարություններ Հայաստանում միայն դեռության կողմից չէին: Ակտիվիստական հոգեբանությունը տարածվել և ներգրավել էր նաև ազգաբնակչության գրեթե բոլոր շերտերից մի կարևոր զանգվածի ևս: Փողոցում, դպրոցում, ԲՈՒՀ-ում, խանութում, աշխատավայրում շատերի անհանդուրժողությանն ու խստականությանն էին արժանանում ոչ միայն եկեղեցականները, այլ նաև հավատացյալները: Այսօր գրեթե չկա եկեղեցական, որը, եկեղեցի հանձնված, անգամ իր մանկության օրերից ենթարկված չլինի վարքի թե մեծերի վիրավորանքներին, լռասանքներին, արհամարհանքին: «Տերտեր», «տիրացու» անարգական բացական չորությունները միշտ տրտվել են նրանց հետևից, կամ երեսին: Հետևից քար նետողների խանդավառությունը հանգիստ անզգաստ է եղել: Այդ բոլորը մեր եկեղեցականները կրել են համբերատարությամբ: Եկեղեցու հարցերի «կարգավորման հոգեբանությունն» դրսևորող մարդկանց նա մեկ հրավեր ունեմ ակտիվիստական շարժում սկսելուց առաջ թող իրենց խղճի և հիշողության մեջ դրոշեն, թե որ բանակին են դասակցել իրենք, քար նետողների՞, թե ընդունողների: Արդ, թող ուսումնասիրեն և լավ ծանոթանան Հայ Եկեղեցուն ու նրա խնդիրներին, այլապես հնարավոր է, որ «հոմ շինելու փոխարեն աչքն էլ հանեն»: Առանց վիրավորելու մատրությունն, դեռ է գիտակցել, որ ժողովրդավարությունը ամբոխակարությունը չէ:

Ես հարկ սեղեցի այստեղ ասել, ոչ մեր ընկերությունը լավերի և լաստերի բաժանելու, և ոչ էլ որևէ մեկի հանդեպ կշտամբանք ողդելու նպատակով: Ժամանակներն էին այդպես և մեղավոր չկա: Միայն թե դեռ է հիշել, որ եկեղեցու հարցերով զբաղվելն ավելի բարդության իրավունք է, քան թե քաղաքականությունը:

Ինչ վերաբերում է Գարեգին Բ. կաթողիկոսի բեկնածությանը, ապա դա կարևոր և բազմաթև հարց է: Ես այդ բեկնածությունը նկատում եմ հնարավոր, և իրականանալու դեպքում շատ օգտակար Հայ եկեղեցու համար, եթե դրանով լուծվում է երկու Աթոռների միացման բնագիրը և Անթիլիասի վերացումով Հայ եկեղեցին վերամիավորվում է: Այս նպատակից դուրս, այդ բեկնածությունը ես նկատում եմ անընդունելի և անձնատես հակառակ եմ դրան: Միայն չհասկացվելու համար ավելի դարձեմ միտս: Իմ առարկությունը Գարեգին կաթողիկոսի անձի դեմ չէ, այլ նրա հանգամանքի: Եվ ոչ էլ այդ հանգամանքը որպես Տանն Կիլիկիո կաթողիկոս դիտելու մեջ, այլ որպես Անթիլիասի միաբան եկեղեցական: Ի նկատի ունենալով վերջին 40 տարիների Անթիլիասի բացասայ, երբեմն անգամ բնեամական դայքարը Ս. Էջմիածնի, նրա հեղինակության, իրավունքների դեմ, ոչ միայն իրավական, այլ նաև բարոյական հարց է դառնում նրա եկեղեցականների Ս. Էջմիածնի Աթոռին որպես կաթողիկոսական բեկնածու ներկայանալու խնդիրը: Նման տրամաբանությունն անհասկանալի է և մերժելի: Անթիլիասը քաղաքական բռնի միջամտությամբ գրավեց Լեմիածնադատական բեմեր, նսեմացնելու նպատակով Աթոռի հեղինակությունը մսահղացավ և գաղափարախոսության վերածեց հավատարազոր Աթոռների դրայրը, նույն նպատակով և ի գին հայ ժողովրդի հոգևոր դատակնիռ, առաջ քաշեց Սիլիսիոյ Անթիլիասին, Հայաստանը Էջմիածնին գաղափարը, գործածեց Ամենայն Հայոց Կաթողիկոս տիտղոսը: Միջազգային ասյաններում, այնտեղ, որ արժան էր միասնաբար ներկայանալ, նրա վարքագծի դատճառով Հայ եկեղեցին միշտ ներկա գտնվեց երկփեղկված վիճակով, որ Անթիլիասը միշտ Էջմիածնի շահերին հակառակ տեսակետ դարբտանեց: Նա մինչև վերջ խոչընդոտեց և արգելք հանդիսացավ, որպեսզի Հայ եկեղեցին օժտվեր մի միասնական կանոնագրությամբ: Այսքանից ավելի մեծ վնաս եկեղեցուն չի կարելի դատկերացնել, հակառակ, որ կարելի է դեռ ավելացնել Ս. Էջմիածնի շահերի դեմ նրա ոտնձգությունների ցանկը: Այդ բոլորի փոխարեն Անթիլիասը մինչև այժմ որևէ հայասարարություն դեռևս չի կատարել, որի մեջ դայքն չափով զգացվեր, որ նա ցավում և գղջում է անցյալի իր վարքագծի համար: Չեն վերադարձվել զրավված բեմերից և ոչ մեկը: Ոչ իսկ սկսել են երկխոսության բանակցություններ արժեքելու ներկա կացությունը և միասնաբար ճանապարհ որոնելու գայթակղությունը վերացնելու համար:

Իրերի այս դրության մեջ, Անթիլիասի որևէ մասնաբանի բազմելը Ս. Գրիգոր Լուսավորչի գահին, միայն դեռ է դիտվի որպես մրցակցության մեջ Անթիլիասի հայրանակ և Ս. Էջմիածնի Աթոռի ներսից գրավում: Նման դեղմում Ամենայն Հայոց կաթողիկոսությունը բացի իր շահերի ոտնահարումից, դրանից ավելի ինքնասիրության նվաստացում, արժանապատվության վիրավորանք և անդրադարձություն իր ողջ դատմության ընթացքում այլևս չի կարող ունենալ: Էջմիածնի Աթոռի շահն ու արժանապատվությունը ոտքի վրա դարձնելուց հետո այլևս Հայ եկեղեցուց մեծ ակնկալություններ դեռ չէ ունենալ:

Հիշյալ իրավական և բարոյական արգելքներից բացի կան գործնական և եկեղեցագիտական մի շարք դժվարություններ ևս, որոնք դեռ է գիտակցվեն:

Անթիլիասի եղիսկոպոսների մեծ մասը, այդ թվում, շատերի կարծիքով, նաև Գարեգին կաթողիկոսը կոստակցության անդամներ են: Փաստացիորեն դաշնակցությունը դեռևս իր տիրապետության տակ է դահում Անթիլիասն ու նրա բեմերը, իսկ Գարեգին կաթողիկոսը ոչ միայն հանդուրժում է այդ կացությունը, այլ նաև համաձայն է դրան: Արդարացում չկա այն փաստին, որ նա այդ բռնաստությունից ձերազատվելու ոչ մի փորձ չի կատարում: Անթիլիասի վանքում, բնական առաջնորդություններում և ծխերում մնալուն կերդով հերթապահող կուսակցության ներկայացուցիչը հանդիսանում է գործերի հսկիչը, կառավարիչը և տնօրինողը, առանց որի գիտության կաթողիկոսարանում, առաջնորդություններում և եկեղեցական համայնքներում ոչինչ չի կարող կատարվել: Դրանով, Անթիլիասին իր քաղաքական գործիքը դարձրած կուսակցությունը ադահիվում է իր ամենարեմությունը և օգտագործում է եկեղեցու միջոցներն ու հնարավորությունները, գոյացնելու համար իր ակումբները, կուսակցական կառույցները և ազդեցություն տարածում ժողովրդի վրա: Եթե ինչ-որ տեղ անցյալում դա կարող էր բացատրվել սովետական շրջանի հակառակությունները, ապա այսօր, երբ արդեն հինգ տարի Հայաստանն անկախ է, դա արդարացում չունի, որովհետև Անթիլիասը շատ հանգիստ կարող էր ազատագրվել կուսակցականության տիրապետությունից: Բավարար էր միայն գանկանալ:

Նիստական տեսակետից ես գտնում եմ մի կանոնական մի հարց, որի եկեղեցագիտական գնահատականը եկեղեցու կողմից տակավին չի տրվել: Այն մանավանդ իր բարոյական արժեքի մեջ լուրջ խնդիր է: Դա 1956 թ. Անթիլիասում կաթողիկոսական օծման դարագան է: Հայտնի է, որ կաթողիկոսին դեռ է ձեռնադրեն և օծեն առնվազն երեք եղիսկոպոս միասին: Կատարելու համար հիշյալ օծումը, բանի որ բոլոր հայ եղիսկոպոսներ հրավիրվել էին մասնակցել, բացի երկու հոգուց: Իր կամքը դարատարելու համար կուսակցությունը գտավ և վարձեց դատրաստական մի ատոր եղիսկոպոսի, որի մասնակցությամբ օծվեց վերջին խզումից հետո Անթիլիասի առաջին կաթողիկոսը: Մեռավոր Արևելքի հայության մեջ երկար ժամանակ շրջագայում էր առորած հասկացությունը, որը համարժեք էր նկատվում թեթի օծման հետ: Արդ, երբ հարցը քննարկում ենք մեր եկեղեցու ազգային նկարագրի տեսակետից, անժխտելի է դառնում, որ 1956 թ. հետո Անթիլիասում կատարված քահանայական, վարդապետական և եղիսկոպոսական բոլոր ձեռնադրությունները ու օծումները իրենց մեջ ունեն դակասավորության, բերատարության մաս: Եթե անգամ հարցին մոտենալու լինենք լայնախոհորեն, և մտածենք, որ եղիսկոպոսը եղիսկոպոս է, դեռ է իրոդությունն ընդունել, հաշվել դրա հետ և վերջ, այդուհանդերձ բարոյական մի խնդիր մնում է անլուծ: Դա այն է, որ մեր դատմության շատ իրադարձություններ անվերադարձության դատճառով մնում են առանց գնահատական ստանալու և այդ դեղքն էլ դրանցից մեկն է: Դատմության դասերը դեռ է օրինակ դառնան, որդեսզի չկրկնվեն սխալները: Այսօր մենք դարտավոր ենք գնահատական տալ, դիրք ճշտել և Անթիլիասին թեղադրել ընդունելու մի խորհրդանշական ծիսական ակտ, որդեսզի մարդկանց գիտակցության և հոգեբանության մեջ դրոշմվի մի ճշմարտություն: Այն որ ազգի և եկեղեցու առաջ միշտ կարող են ծառանալ դժվարություններ և փորձություններ: Նման դեղքերում բոլոր միջոցները չէ, որ մի քմահաճույք կատարելու համար, կարող են բարոյական նկատվել: Մանավանդ, եթե դրանց հիմքում ընկած է լինում ազգի դատակցման մոտեցումը: Կան ամենաններ, որոնք ոչ մի դեղքում բոլորատելի չէ անցնել:

Գարեգին կաթողիկոսի բեկնածությունն ընդունելու համար գոյություն ունի մի լուրջ կանոնական արգելք ևս: Թեկնածուն դեռ է հնազանդության ուխտ կատարած լինի Ս. Էջմիածնի Աթոռին: Դա ենթադրում է, որ նա դարտավոր է առաջնորդվել Աթոռի շահով և ծառայել դրան: Այդ ուխտը կատարվում է միայն Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջ: Այսօր ցանկության դեղքում իսկ, հնարավոր չէ այն կատարել, այն դարզ դատճառով, որ Աթոռը գահակալ չունի: Իսկ մյուս կողմից, Անթիլիասի Աթոռին նրա կատարած ուխտը դահանջում է, որ նա հավատարմորեն ծառայի այդ Աթոռի շահերին ...

Այս բոլորը, ինչպես նաև Ս. Էջմիածնի վանքի մեծությունն ու արժանապատվությունը ի նկատի ունենալով այդ հարցը դեռ է նկատել փակված: Սակայն Աթոռների միջև երկխոսության ճանապարհով միացման խնդրի վերջնական լուծման բոլոր ճանապարհները դեռ չէ փակված նկատել: Ընդհակառակը, Անթիլիասի հետ դեռ է սկսել առաջ մոտեցումով մնայուն բանակցություններ մի դրական լուծման հասնելու նպատակով:

– Ձեր կարծիքով կլինե՞ն ժողովրդավարական կարգ ու կանոնով ընտրություններ: Պետությունը կմիջամտի՞:

– Կան միջամտելու երկու կերպեր: դարատարել կամ ազդեցություն օգտագործել: Ես համոզված եմ, որ առաջին իմաստով նման բան տեղի չի ունենա: Նախ այն դատճառով, որ եկեղեցին դեռ է դությունից անջատված է: Երկրորդ մեր նորանկախ դեռությունը լրջորեն ձգտում է ժողովրդավար, իրավական դեռություն դառնալու: Միջամտության երկրորդ ճանապարհը, ժողովրդավարական ընկերության մեջ ֆիզիկական կամ իրավաբանական որևէ անձի իրավունքներից մեկն է, ներառյալ դեռական իշխանությունները: Այս երկրորդ իմաստով ես նման կեղվածք հնարավոր եմ գտնում, և հենց այս ձևի մեջ էլ տեսնում եմ մի բանի օր առաջ Հանրադեռության մեծարգո նախագահի մամուլով արտահայտած կարծիքը ի նպաստ Գարեգին Բ. կաթողիկոսի: Նույն ձևի մեջ եմ տեսնում նաև Ռուսաստանի քաղաքական կառույց երկու դեմքերի՝ Պրֆ. Ելցինի և Շումեյկոյի կարծիքները: Այն միակ տարբերությամբ, որ դրանք կարող են նկատվել որպես դեղության ներքին գործերին միջամտելու փորձ, չհաշված եկեղեցու ներքին գործերին միջամտելը: Դրանք անհասկանալի կարծիքներ են: Նման դեղքում դեռ է կարողանալ նաև բաժանել անձը դատասխանից և հարցերով հանդերձ արտահայտված կարծիքը այն չդիտել որպես ի դատասխան կայացրած որոշում, որը ենթակա է կատարման:

Պետությունը միջամտելու գայթակղությանը չի ենթարկվի դրդված դատգամավորների ազատության իրավունքը հարգելուց, և երկրորդ որոմիեն իմն էլ դիտի չհամարձակվի մտնել նման հանձնառության և դատասխանատվության տակ: Չկա որևէ երաշխիք, որ դեռության նախասիրած անձը նրա օգնությամբ գան բարձրանալով կարդարացնի ազգի և եկեղեցու աղաղումները: Հակառակ դեղքում դեռ է դեղմում դատասխանատվության ողջ ծանրությունը կրնկնի միայն դեռության վրա:

Մյուս կողմից, թե մեր դեռական իշխանություններ, թե մանավանդ եկեղեցին ինքը, ամեն ջանք դեռ է գործադրեն բոլոր չտալու համար որևէ տեսակ միջամտության եկեղեցու գործերին: Մանավանդ քաղաքական միջամտություն: Դրանից ելնելով չտեսել է տաժել և ներկայի նրա դդերազական վիճակը դրա արդյունքն է: Արտաեկեղեցական քաղաքական ուժերը Հայ եկեղեցին դիտելով սոսկ իբրև հայ ժողովրդի վրա ազդեցություն ունեցող ուժ, այն իրենց հսկողության տակ դահելու և իրենց շահերին ծառայեցնելու նպատակով միշտ փորձել են միջամտել և ուղղություն տալ նրա գործերին: Միշտ այնպես է ստացվել, որ նրանք մտածել և որոշել են եկեղեցու փոխարեն, իսկ եկեղեցուն մնացել է միայն թեղադրանք կատարել: Դրա հետևանքով այն այսօր դարձել է կամազուրկ կազմակերդություն:

Փակելու նպատակով անցյալի այդ տխուր էջը, այսօր դեռ է հնարավորություն ընձեռել եկեղեցուն, որ նա վերականգնի իր անկախությունը: Այդ ազնիվ գործին մեծ նպաստ ունեն բերելու առաջիկա ազգային-եկեղեցական ժողովի դատգամավորները: Նրանց դարտականությունն է լինելու, առանց ազդեցության ենթարկվելու, հասնել իրենց սեփական կարծիքին և առաջնորդվել խղճի մտքով, որովհետև դրա համար դատասխան են տալու ոչ միայն մարդկանց, այլ Աստծո առաջ:

Ինչ վերաբերում է նախագահի տեսակետին, այն ընդունելով որ դեռ առաջարկ, եկեղեցին ևս դարտավոր է լրջորեն մոտենալ դրան: Այդ նպատակով երկու Աթոռների միջև անմիջական երբ դեռ է սկսեն բանակցություններ բոլոր վիճելի հարցերի շուրջ դատմանավորվածություններ ձեռք բերելու համար: Դժբախտաբար երկու կողմերն էլ այս դահին գտնվում են փոխադարձ կասկածանքի անկարողության վիճակում: Ոչ մի կողմից նախաձեռնության ոգի չի ցուցաբերվում: Հնարավոր է, որ միայն մարտի 31-ին Ս. Էջմիածնում նշանակված եղիսկոպոսական ժողովը կարողանա այդ հարցով զբաղվել:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

«Իմ մեջ լսում եմ Պիաֆի ձայնը»

Ջավեն Տատիճյանը նրան Վան Գոգ է ասում: Մենք նրան ավելի շատ Պեղի ենք ճանաչում՝ խենթ, ազնիվ, շարաճճի, որ Պատանի հանդիսատեսի բատրոնի բեմից ազատության մասին է խոսում մեզ հետ: Օրվա հերթական ներկայացումը խաղալուց հետո նրան համադատասխան մարմիններից դիտողություններ էին արվում՝ ազատության մասը պետք չէ բնդգծել: Բայց նա, ամեն ինչից անկախ, շարունակում էր Գարեգին Նժդեհին, և Պեղին նաև միջոց էր դատարկելու արդեն փոխանցված ներսինը: Գոհար Տոքատյանը 1965-ին ավարտել է պարարվեստի ուսումնարանը և ընդունվել գեղարվեստաբանական ինստիտուտի դերասանական ֆակուլտետ: 1977-ին ավարտել է նույն ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետը: Աշխատել է մայրամարդամի տարբեր բատրոններում՝ Պարոնյան, Պատանի հանդիսատես, Սունդուկյան, մի հանի օր Դրամատիկ բատրոնում, «Ճնշուն անիմների վրա», «Ռիիսոմ» բատրոնում: «Յուրահատկությամբ դերասան, ասում է Գոհարը, Պատանի հանդիսատեսի բատրոնում մի որոշ շրջան պիտի խաղա, պիտի պատեղից սկսի»: Տարիների բացակայությունից հետո նա վերադարձել է հարազատ բատրոն՝ իբրև բեմադրիչ. «Ճնիաբ սիրո մասին» նրա վերջին բեմադրությունը բատկանաչսի հետաքրքիր սկիզբ է:

հասցնում: Իբրև ռեժիսոր իմ խնդիրը երիտասարդներին «բացելն» է: Առաջվա լարվածությունը (տարիներ առաջ «Գարուհա Լորկայի» ժամանակ), ինչ որ չափով անցել է. աշխատում եմ փորձերին հանգիստ դահել ինձ՝ պիտի սովորեմ հանգիստ ռեժիսոր լինել: Ինձ համար շատ հետաքրքրական է աշխատանքային դրությունը. երբ լիցք ես ստանում մի կից, ով դեռ շատ բույլ է: Ստեղծագործական ընթացքը դժվար ու բանկացին մի բան է. ինչ որ դժվար ցավի մեջ տեսնում ես արդյունք երեխայի դեմքի արտահայտ:

– Իսկ դեռ մարմնավարելու դրական չե՞ս զգում արդյոք:

– Ինձ մեկ մեկ թվում է. թե հիմա չեմ կարողանա խաղալ: Թատրոնի դերասանը ամեն օր պիտի խաղա ու մեռնի բեմի վրա. հաջորդ օրը նորից սկսի ադրել: 1-2-3-4 տարի չես խաղում. հանդիսատեսը մոռանում է քեզ. ինքդ էլ մոռանում ես քեզ. ու ... Արդեն մի քանի տարի է սղասում եմ որեմ հետաքրքիր ռեժիսոր ինձ հրավիրի խաղալու: Դա բեմադրում, դու խաղում ես. բանի նման չի:

– Իսկ նրանք քեզ չե՞ն գտնում:

– Հիմա ամենքը զբաղված են իրենց բատրոններով ու իրենց բատրոնի դերասաններով: Արտասահման շատ են գնում. որ ստացած վարդով բատրոն դահեն: Բայց եթեի թե մի բան կլինի. Նիկոլայ Ծատուրյանին ասացի մտածես դերն ինձ ուզում է: Նա կնոջը լավ է հասկանում: Ուզում եմ Էդիթ Պիաֆի խաղալ. ես իմ մեջ զգում ինչքան ժամանակ լսում եմ նրա ձայնը: Կինչեն նրա երգերի հայերեն տարբերակներ. թե մում կարեա դժբախտ ու մեծ ավանտագնա կնոջ ողբերգությունը. որն ամեն օր մեռնում արթնանում էր:

– Նաև արթնացնում: Է՞րբ կլինի:

– Երբ հավանատոր ու փաղ գտնեմ: Ոչ ոք չի ուզում իր վարը ներդնել ավանտի մեջ: Արվեստը փող հիշ է բերում. բայց նրա դրսկասը մրցությունը խեղդվելով է լցնում:

– Դերասանուհի Գոհար Տոքատյանին ո՞ր ռեժիսորը «բացեց», թե ասա միայն Ֆ ռնորհին էր:

– Շատ բան ստացել եմ իմ դասախոս Վարդան Աճեմյանից: Նա հիշ էր խոսում: Հարց էիր տալիս բարկանում էր. «Աչք չունե՞ս»: Նայելով դիտի գոդանայիր: Շատ բան տվեց Կարեն Վարժապետյանը հետաքրքիր ու խելացի մի մարդ. փնտրող ռեժիսոր: Շեմ մոռանում Գրիգոր Մկրտչյանին, որն այդպես էլ մնաց դոնորի ներսում: ՊՀԹ-ում շատ բան տվեց Ջավեն Տատիճյանը:

– Կա՞ն դերասաններ, որ բեմում դատճենում են քեզ:

– Չգիտեմ, բայց շատ են ասում: Վերջին գեղեցիկում ասացին. թե իմ նոր բեմադրության հերոսուհին ինձ է դատճենում: Նման է միգուցե. անհատականությունը վերարտադրել չի լինի: Ես էլ շատ բան ռիսներից եմ վերցրել:

– Ումի՞ց:

– Ջուլետա Մազինայից, Աննա Մանիանցից, Սիմոնա Սինյորեից:

Ներքին դրամատիզմը հիշ հիշ չափն ավելացնելով զուգադրել. հետ բաբցնել. հետ էլի ափ հանել. բայց ամենակարևորը միշտ բողնել խորքում:

– Քո դերակատարումները բնավորության ի՞նչ նոր գույներով հարստացրին քեզ:

– Ես միշտ իմ գույները եմ երևացրել. ընդգծված. դրամատիզմով լեցուն. աշխույժ. ազատություն կարեորդ բնավորություններ:

– Ի դեպ. ազատության քո ընկալման ու բեմից այն հնչեցնելու համար դատիդ Գարեգին Նժդեհին. մեղմ ասած, չէի՞ն հիշատակում:

– Այն էլ ինչպե՞ս: Դեռ ինստիտուտում զրոսում էին Նժդեհի բառ. ֆաշիստի բառ: Պատասխանները դիտում էին խաղս. առաջարկում էին աշխատավարձս բարձրացնել. բայց երբ իմանում էին՝ ով եմ. ձեռնոցի էին մնում: Պարոիս անունը շատ խանգարեց մեր ընտանիքին. ասենք. հիմա էլ չի «օգնում»: 2 տարի առաջ ուզում էի նրա մասին վավերագրական-գեղարվեստական ֆիլմ ստեղծել. փող չտվեցին: Այնինչ հետաքրքիր էր լինելու տեսնել. թե ինչպես արդեն նրա ընտանիքը Նժդեհի բացակայության տարիներին: Մեր տանը հրաշալի մրնոլորտ կարգալիս էին Նժդեհի կնոջ մոտ. մինչև լույս խոսում. երգում. արտասանում. տաս մինչև 80 տարեկանը բանաստեղծություններ էր սովորում:

Մեր տան մրնոլորտը (մոռացա ասեմ հայրս էլ դերասան էր) ես փոխադրում էի բեմ. և իմ դերերի խորքում դնում դեղի ազատ. սեր. լույս. ճշմարիտ. անվախ ընթանալու նպատակը: Միայն «Երկարգույղա Պեղին» չէ. հիշեմ նաև Մարաս Մարինոսյանի «Սկիզբը»: ...Հավանաբա դերերը (անգույն դերեր երեի չեմ ունեցել) «գժի դրես էի խաղում» ասում էին: Ամեն բեմ բարձրանալիս բռնվում էի. ասես վերջին անգամ էի խաղում: Երեի վախենում էի՝ իսկ վաղը կխաղա՞մ:

– Իսկ վախը որտեղի՞ց էր գալիս:

– Չգիտեմ: Երեի շատ սիրեցուց:

– Այդքան սիրելով հանգերձ 6-7 տարի ինչպե՞ս դիմացար բեմից. ստեղծագործելուց հեռու:

– Հեռու էի Պատանի հանդիսատեսի բատրոնից. բայց բեմից հեռու չէի. գրեթե էլ «Թատրոն անիմների վրա» աշխատում էր. և հանդիսատես միշտ ունենում էինք: Դորաբաց Սվետլանա բատրոնում էլ ծրագրեր շատ ունեմ: Բացի այդ. հեռատատեսային 2 կարճամետրաժ ֆիլմ ստեղծեցի:

– Ի՞նչ ֆիլմեր էին դրանք:

– Երկու փոքրիկ ֆիլմ սիրո. կինտրամարդ հարաբերությունների մասին: Առաջինը Տերյանի տղով. շեշով. անբարո. խաղարկու «Եղ տարցն աշխարհը եղ կար. եղ չկար» և երկրորդը «Ֆանտազիա Մարդոմ»:

– Գոհար Տոքատյան դերասանուհին բատրոնում բեմադրություններ է անում. ֆիլմեր է նկարում. մեզ համար անհայտ էլ ուրիշ ինչե՞ր կան:

– Այսօր էլ ի՞նչ կարող է անել՝ փող է հայթայթում. տարբեր ճաշեր եփում ասենք դրանի գաջերից. տարբերնակ բաներից. որոնք չկան: Միշտ սիրել եմ խոհանոցում հարինել: Վերջերս մեր տան 12 տարիանոց հին ծածկոցից մի հետաքրքիր զգեստ ստեղծեցի: Ուրիշ էլ ինչ... չմոռանամ ասել ժամանակիս մի հասված էլ ներում եմ «Գանձասար» կարդալուն:

ԱՆՈՒՇԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Չարենցի տուն-թանգարանը 20 տարեկան է

Մարտի 13-ին լրացավ Եղիշե Չարենցի 98 տարին

Երեկ ե. Չարենցի տուն թանգարանում նշվեց բանաստեղծի ծննդյան տարեդարձը: Թանգարանի աշխատակիցների եւ մեզ համար հիշարժան էր մարտի 13-ը նաեւ նրանով, որ նշվում էր թանգարանի 20 ամյա հոբելյանը: Միջոցառմանը ներկա էին Ռեգինա Գազարյանը, Ազատ Գասպարյանը, բանասիրական գիտ. դոկտորներ՝ Ալմաստ Ղահարյանը եւ Դավիթ Գասպարյանը: Դավիթ Գասպարյանը թանգարանին նվիրեց իր նոր գիրքը՝ «Փակ դռների գաղտնիքը»: Գիրքն արդյունք է անվանգության պետական վարչության հատուկ կական եւ հաղորդակցության գործունեության փաստաթղթերի, պետական կենտրոնական արխիվի եւ գրականության ու արվեստի թանգարանի դիվաններում ուսումնասիրության, որոնք նոր լույս են սփռում հայ մշակույթի գործիչների կյանքի ու ողբերգական ճակատագրերի վրա: Թանգարանի տնօրեն Լիլիթ Հակոբյանը շնորհակալական խոսքեր հղեց նրանց, ովքեր աջակցում են թանգարանի աշխատանքներին՝ չմոռանալով նաեւ թանգարանի հիմնադիրներին՝ Նվարդ Բաղդասարյանին, Սոնա Երանոսյանին, Էմմա Բուդաղյանին:

Այսօր թանգարանում կա 14638 թանգարանային առարկա, որից 7029-ը հիմնական ֆոնդի ցուցանմուշներն են: Անցյալ տարի ծեռ բերվեցին Չարենցի անձնական թանգարանից վաղուց անհետացած «Մանոն Լեսկո» գիրքը՝ Չարենցի մակագրությամբ, ինչպես նաեւ նրա մոր եւ քրոջ՝ Մարիամ Սողոմոնյանի լուսանկարները:

Անցյալ տարի ստեղծվել է Չարենցի անվան հիմնադրամ՝ նվիրված բանաստեղծի 100 ամյակին որը լրանում է 1997 թ-ին:

Երեկ գործում էր նաեւ թանգարանի 20 ամյա կյանքին նվիրված լուսանկարների ցուցասրահը:

ՈՒԼՅԱՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄՈՍԿՎԱ

Ներկայացվեց «Հայոց-Քարթլոսի» առաջին հատորը

Գարնան առաջին օրը Մոսկվայի Հին Արբատում գտնվող վրացական մշակույթի «Մզխուրի» կենտրոնում ներկայացվեց «Հայոց-Քարթլոս» հանդեսի առաջին հատորը. որն իր անվանումն ստացել է առաստղեկական երկու եղբայրների հայերի ու վրացիների նախահայրերի անուններից: Հավանաբար այս տարվա մայիսին տեղի կունենա նույն անունը կրող հայ-վրացական ընկերության հիմնադիր ժողովը: Կազմակերպիչների խոսքերով. ընկերությունը պետք է նպաստի երկու ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը: Այն կգործի հայկական կողմից Շաղ Ազնավուրի հովանու ներքո. որի համաձայնությունն արդեն ստացվել է: Վրացական կողմի հովանավորը կլինի Էդուարդ Շեւարդնաձեն. որի հետ բանակցություններ են վարվում: Իսկ առայժմ կազմակերպական բոլոր հարցերով զբաղվում են Հայկական համաշխարհային համագումարի ներկայացուցիչները: առարկությանը ներկա գտնված Սերժ Ջիգարյանի գլխավորությամբ եւ հայտնի հանդեսագրագետ Զուրաբ Ծերեթելին: Վերջինս Մոսկվայից մեկնելու կապակցությամբ չկարողացավ ներկա լինել «Մզխուրում» կայացած արարողությանը. սակայն. ինչպես հայտնի դարձավ «Ազգի» Մոսկվայի թղթակից Լուսիկ Դանիելյանին. դրանից մեկ օր առաջ նա ընդունել էր Համաշխարհային հայկական համագումարի փոխնախագահ Մկիթ Սարկիսյանին եւ Սարեն Հարությունյանին. ինարկելով մի շարք հարցեր:

Ի դեպ. ներկաներն այնքան էլ շատ չէին. հատկապես վրացական կողմից. ինչը չեմ ասի հայկական կոնցերտի եւ վրացական խաչադարձի մասին: Սակայն իր հայրենակիցների սակավությունը լիովին փոխհատուցեց Թամարա Գվիաղցիշեվին իր հիասքանչ կատարումներով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հակոբ Պարոնյանի անվան կոմեդիայի բատրոնում մարտի 19-ին «Հայք» համույթը կներկայացնի նոր «ՔԱՋԱԼ ՈՂՆԻՆԵՐ» շոուն:

Ծրագրում՝

կենդանի երգ-երաժշտություն. հումոր. յոգ

Տոմսերը վաճառվում են բատրոնի տոմսարկղում եւ մետրոպոլիտենի տարածքում: Սկիզբը՝ ժամը 14-ին:

☎ 58.01.01. 47.25.75. 42.70.85

SARTARABAD Co. LTD

«ՍԱՐԴԱՐԱՊԱՏ» ՍՊԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է

ԵՐԵՎԱՆ-ԲԵՅՐՈՒԹ

ՕԴԻ ՉՎԵՐԹՈՎ 7 ՕՐՎԱ ԳՐԱՎԻՉ ՃԱՄ[illegible]

3 աստղանի հյուրանոց. Էլեկտրահաներ Լիբանանի տնտեսական վայրեր. սենյակ. օրական 2 անգամ

Անհատական վիզաների եւ այլ փաստաթղթերի ձեւակերպում եւ հաստատում Մոսկվայում:

A STYLE

«ԷՐԵԲՈՒՆԻ» հյուրանոց. 2-րդ մասնաբեմ. 327 սենյակ. Հեռ. 565575

ՅՈՒՅՍԱՀԱՆԴԵՍ

Աննա Բարսեղյանի երկրորդ անհատականը

Շաբաթ օրը Կամերային Fe դասկերասրահում բացվեց Աննա Բարսեղյանի երկրորդ անհատական ցուցահանդեսը: Առաջինը բացվել էր 1994-ի նոյեմբերին, ճարտարապետի տանը (որին «Ազգը» ժամանակին անդրադարձել է իր թերթի էջերում): Այս ցուցահանդեսը նախորդից տարբերվում էր վերջին 1995-ին արված գործերով. որոնք հիմնականում լրացնում են նախորդ տարիներին ստեղծված շարքը՝ «Լուսինը կորցրել է հիշողությունը», եւ շարքերից դուրս նկարները. որոնք շարունակում են լուսնի թեման («Լուսնոտ սկիզբ», «Լուսնի վերջին բաժակը»): Աննայի 1995-ին թվագրված աշխատանքները մաքուր աբստրակտ են, գունային լուծումներում ավելի հաճախ նկարչությունին գերադասվում է ջուր շագանակագույնին, բաց շագանակագույնին, կարմրաշագանակագույնին եւ դարչնականաչ կաքնագույն սպիտակ մարմնագույնին: Այս տարվա կտավները գունային համադրումների եւ նաեւ կտրուկ (կարմիր մութ կաղույտ, սեւ սպիտակ) անցումների մեջ խիստ տպավորական են:

Նախորդ տարիների՝ երկու եռանկյուններով շրջանակված աշխատանքը նոր տարբերակներ է ստեղծել. «Նյութից ոտկվելու այս ձեւը» Ան նայի այս տարի ստեղծված աշխատանքները հարստացրել է եւս երկուսով «Քնած եմ այստեղ. արթուն մի այլ տեղ», կտավը «տեղավորվում է» 3 տարբեր եռանկյուններում, իսկ այդ շարքի երկրորդ աշխատանքը՝ մի մեծ ուղղանկյան եւ 2 փոքր ուղղանկյուն ներում:

Մ. Հ.

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

Առաջնությունն սկսում է չեմպիոնը

Գավաթի խաղարկությունում առանց անակնկալների

ՍԱՄՎԵԼ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ.

ՀՀ ֆուտբոլի գավաթի 1995 թ. խաղարկության 1/8-ի եզրափակիչում անակնկալներ չգրանցվեցին: Բոլոր ուժեղագույնները դուրս եկան հաջորդ եզրափակիչ: Հանրապետության չեմպիոն Գյումրիի «Շիրակը» հյուրընկալելով Գորիսի «Զանգեզուրին» 4-0 հաշվով հեշտ հաղթանակ տարավ: Խաղը տեղի ունեցավ «Արագածի» մարզադաշտում: Գյումրիի խաղախային մարզադաշտը ցավոքաբար ոչեմ է վերակառուցվի մինչև նորոդական ակումբային լիգաների հերթական մրցաշարերի սկսվելը, քանի որ «Շիրակը» Հայաստանը ներկայացնելու է ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկությունում, բացի այդ ինչպես տեղեկացրեց «Շիրակ» լիգի ղեկ Սամվել Մանուկյանը, նախօրեին ուժեղ ձյուն է տեղացել եւ Գյումրիի խաղախային մարզադաշտը դարձել է ձյան հաստ շերտով:

Երեւանի «Արարատը» մեծ դժվարությամբ կարողացավ հաղթահարել 1/8-ի եզրափակիչը: «Վանի» հետ հանդիպման հիմնական ժամանակի ավարտից միայն 15 վայրկյան առաջ Արմեն Շահգելդյանին հաջողվեց հաղթանակ բերել «Արարատին» (2-1):

Երեւանի ՀՄՄ-ն 4-1 հաշվով առավելության հասավ Էջմիածնի «ԲՄԱ-Արայի» լիգի նկատմամբ: Երեւում է ՀՄՄ-ն լավ մարզավիճակում է դիմավորում նոր մրցաշրջանը: Համենայն դեպս, լիգը մինչ այդ հաղթող է ճանաչվել մեր լավագույն մրցավարներից մեկի Ռուդոլֆ Միրիմանյանի հուշամրցաշարում:

Քառորդ եւ կիսաեզրափակիչ փուլերում մինչեւ եզրափակիչ լիգերը միմյանց հետ հանդիպելու են երկուական անգամ: Քառորդ եզրափակիչում հաստատեց մեծ հետաքրքրություն են առաջացնում նախորդ առաջնության առաջին երկու մրցանակակիրների «Շիրակի» եւ ՀՄՄ-ի հանդիպումները: Եւ այսպես, քառորդ եզրափակիչում հանդիպելու են.

«Շիրակ»-ՀՄՄ
(04.04.95/13.04.95)
«Բանանց»-«Կոտայք»
(04.04.95/14.04.95)
ՀՄՄ-«Ցեմենտ»
(04.04.95/13.04.95)
«Արաքիր»-«Արարատ»
(03.04.95/13.04.95)

Նախօրեին «Շիրակ»-«Զանգեզուր» հանդիպումով մեկնարկեց նաեւ Հայաստանի Հանրապետության ֆուտբոլի բարձրագույն խմբի 4-րդ առաջնությունը: Ինչպես եւ գավաթային խաղում, այս անգամ էլ «Շիրակի» առավելությունը բացահայտ էր: Չեմպիոնը հաղթեց 6-1 հաշվով: «Շիրակից» աչի ընկավ նույնիսկ դարպասապահ Ռայմոնդ Զաքարյանը, որը խոցեց 11 մետրանոց հարվածը: Մինչ այդ գյումրեցիներից մեկական գոլի հեղինակ էին դարձել Գրիգոր Գրիգորյանը, Սամվել Նիկոլյանը, Գագիկ Մարգարյանը, Արթուր Պետրոսյանը եւ Հովհաննես Թաքմազյանը, որը նույնպես դարպասը գրավել է 11 մետրանոց հարվածով: Այսպիսով, «Զանգեզուրի» հետ իրար հետեւից երկու հանդիպումներում «Շիրակը» խփեց 10 գոլ: Սա հենց սկզբից կրկին վկայում է, որ նոր առաջնությունում էլ ուժերն անհավասար են լինելու, որը չի կարող ազդակ լինել ուժեղագույն մրցակցությունը: Սակայն մնիքարում է այն, որ Հայաստանի հերթական առաջնությունը աստն-գարուն շրջափուլի անցումային մրցաշարն է:

Այսօր ՀՀ առաջնությունում տեղի կունենա եւս երկու հանդիպում: Ժամը 15-ին կմրցեն ՀՄՄ-«Երազանք», «Ցեմենտ»-«Ազնավոր» լիգերը:

ՇԱԽՄԱՏ

Սմբատ Լոռեցյանի ամերիկյան հաղթանակները

ԱՄՆ կատարած երկարատեւ մրցաշրջանի գայությունից երեւան վերադարձավ գրոսմայստեր Սմբատ Լոռեցյանը: Հայ շախմատիստը հանդես եկավ չորս մրցաշարերում, որոնցից երեքում առաջին մրցանակներ նվաճեց: Առանձնապես հաջող էր Սմբատի ելույթը Լոս Անջելեսի բաց առաջնությունում, որտեղ նա հաղթեց հայրենի տոկոսանոց արդյունքով 5 հնարավորից 5 միավոր: Նույն խաղաշում անցկացված մեկ այլ մրցաշարում Լոռեցյանը 5 հանդիպումներում վաստակեց 4 միավոր եւ բաժանեց առաջին տեղը: Նույն արդյունքը (4 միավոր, առաջին մրցանակի բաժնում) կրկնվեց Դալասում: Լոռեցյանը հնարավորություն ուներ հաղթելու նաեւ չորրորդ մրցաշարում՝ Լաս Վեգասում, բայց վերջին տուրի պարտությունը նրան զրկեց առաջին տեղից:

Տուն դարձավ եւս մեկ երեւանցի գրոսմայստեր՝ Արտաշես Մինասյանը, որը մի քանի ամիս ելույթներ էր ունենում Ֆրանսիայում: Վերջին մրցաշրջանում Քափել լա Գրանդ խաղաշում, Արտաշեսը տարավ երեք հաղթանակ, վեց պարտիա ավարտեց ոչ-ոքի, չկրեց ոչ մի պարտություն, բայց այս բարձր արդյունքը բավարար չեղավ ընդհանուր հաղթանակի համար: Առաջին մրցանակը նվաճեց անգլիացի ճանաչված գրոսմայստեր Մայլսը, որը Մինասյանից մեկ միավոր ավելի վաստակեց:

Իսկ Լինարեսի մրցաշարի 8-րդ եւ 9-րդ տուրերում Հակոբյանը ոչ-ոքի խաղաց Իլեսկասի եւ Շորթի հետ: Մյուս պարտիաներում Կարպովը հաղթեց Լոբյեին, Իվանչուկը՝ Լյուբոեւիչին, Թոփալովը՝ Բելյավսկուն, Տիվյակովը՝ Շորթին, Գրեեւը՝ Խալիֆմանին: Հաշտություն կնքվեց Խալիֆման-Շիրով, Սոկոլով-Գրեեւ, Շիրով-Լոբյե, Կարպով-Իվանչուկ, Լյուբոեւիչ-Թոփալով, Բելյավսկի-Իլեսկաս, Տիվյակով-Սոկոլով հանդիպումներում:

9 տուրից հետո աղյուսակը 6,5 ական միավորով գլխավորում են Կարպովը, Իվանչուկը եւ Թոփալովը: Հակոբյանն ունի 2,5 միավոր: 10-րդ տուրում Հակոբյանը սեւերով խաղում է Սոկոլովի հետ:

Հաղթեց Ժուժա Պոլգարը

Սանկտ Պետերբուրգում տեղի ունեցած շախմատի կանանց աշխարհի առաջնության ժուժա Պոլգար-Սայա Չի բուրդանիձե հավակնորդուհիների եզրափակիչ մրցախաղն ավարտվեց ժամանակից շուտ: Պոլգարը 7-րդ պարտիան էլ ավարտելով իր օգտին մրցախաղը շահեց 5.5-1.5 հաշվով, ընդորում չկրելով ոչ մի պարտություն: Հունգարացի շախմատիստուհին մասնակի ուեւանը վերադարձ աշխարհի նախորդ առաջնության շրջափուլում հավակնորդուհիների եզրափակիչ մրցախաղում Վրաստանի մեկ այլ ներկայացուցչից՝ Նանա Իոսելիանիից կրած դաղը պարտության դիմաց: Ժուժա Պոլգարն իրավունք ստացավ ձեռնոց նետել աշխարհի չեմպիոնուհի Սե Չժունին (Չինաստան):

Նորից Կասպարովն ու Անանդը

Իսպանիայում մեկնարկել է պրոֆեսիոնալ շախմատիստների ասոցիացիայի վարկածով աշխարհի առաջնության հավակնորդների եզրափակիչ մրցախաղն ամերիկացի Գարի Կասպարովի եւ հնդկաստանցի Վիշվանաթան Անանդի միջեւ: Հիշեցնենք, որ այս երկու երիտասարդ գրոսմայստերներն արդեն մրցել են ՖԻԴԵ-ի վարկածով աշխարհի առաջնության հավակնորդների խաղաշրջանում, որտեղ դրամական պայմանագրում, լրացուցիչ հանդիպումներում հաղթել է Գարի Կասպարովն, որը վերջերս խոշոր հաշվով առավելության հասնելով Վալերի Սալովի նկատմամբ՝ եզրափակիչում աշխարհի չեմպիոնի կոչումը վիճարկելու է Անատոլի Կարպովի հետ:

Առաջին պարտիան ավարտվեց ամերիկացի գրոսմայստերի հաղթանակով: Երկրորդ պարտիան խաղաղ ելք ունեցավ: Երրորդում Անանդն սպիտակներով հաղթեց 58-րդ քայլում եւ հաշիվը հավասարվեց:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի հարդու ազգային ֆեդերացիան 1995 թվի հարդու կարճ (դաշի) չեմպիոնի Մոնտե-Կարլոյի առաջնությանը մասնակից թիմ կազմելու համար Երեւանի Նորքի «Ծիծեռնակ» տուրբազայում մարտի 25-ից անցկացնելու է վեց նախնական մրցափուլեր, յուրաքանչյուր ամեն մասնակցի համար 10000 դրամ մուտքագրում՝ կանխիկ կամ փոխանցումով: Մրցաշարերում առաջին հինգ տեղեր գրաված մարզիկները եզրափակիչ փուլում կներկայանան Հայաստանի թիմի առնվազն 6 անդամին:

Մասնակիցների գրանցումը Երեւանի Շախմատիստի տանը մինչեւ մարտի 24-ը ժամը 11-ից 18-ը:

Մասնակիցների թիվն անսահմանափակ է:

Հովանավորները փոխանցումը կարող են կատարել ԲԱՐԲ «ԿՐԵԴԻՏ-ԵՐԵՎԱՆ» կոդ 759, հաշիվ 700208 ՀՆԱՅ-ին:

ԳԵՂԱՍՍԱՀՔ

Աշխարհի առաջնությունը կողմնակալ մրցավարությա՞մբ

Անգլիայի Բիրմինգհեմ քաղաքում ավարտվեց գեղասահքի աշխարհի հերթական առաջնությունը: Ինչպես նշեց Ռուսաստանի հեռուստատեսության մարզական մեկնաբան Գեորգի Սարգսյանցը, առաջնությունն այլի ը կամ երեք կարեւոր գործոններով: Առաջինը այն, որ չորս ձեւերից երկուսում չեմպիոնները փոխվեցին, երկրորդը, որ առաջին անգամ աշխարհի չեմպիոն դարձավ Չինաստանի ներկայացուցիչը՝ կանանց մենասահքերում հաղթեց Լյու Չենը եւ երրորդը մրցավարների կանխակալ կողմից սխալներն էին: Ըստ մեկնաբանի՝ Ռադկա Կավալեկ-Իրնա Նովոտնա չեխական երկյակը զուգասահքերում առաջին տեղ չպետք է գրավեր: Մրցավարներն այդ նվիրատվությունն արեցին, քանի որ վերջին ներս հրաժեշտ են տալիս գեղասահքին: Ըստ Սարգսյանցի՝ զուգասահքերում չեմպիոն պետք է դառնար Եւգենիա Շիշկովա-Վադիմ Նաումով Ռուսաստանի զույգը:

ԲՈՔՍԱՄԱՐՏ

Ուժեղագույնները պահպանեցին իրենց դիրքերը

Վերջերս գնդակոծ կազմակերպված բոքսմատչի Հայաստանի առաջնությունն օրինակ հանդիսացավ նաեւ ազատ բոքսմատչի առաջնության կազմակերպիչների համար:

Կրկին «Դինամո» մարզադաշտում հանդիսավոր նշեցին աչքի ընկած մարզիկներին, մարզիչներին եւ մրցավարներին: Ըստ հաստային կարգերի Հայաստանի չեմպիոններ դարձան Արման Մարգարյանը (Արտաշատի շրջ.), Արմեն Սիմոնյանը, Երեւանի չեմպիոն Անուշավան Սահակյանը, աշխարհամասի փոխչեմպիոն Արայիկ Բաղդասարյանը, Խաչիկ Հարությունյանը (բոլորն էլ Երեւանից), Երեւանի առաջնության երկրորդ մրցանակակիր Արայիկ Գեւորգյանը (Արտաշատի շրջ.), Արսակ Գալստյանը (Կոտայքի շրջ.), Արտեմ Ասատրյանը (Գյումրի), Զարգանդ Նազարեթյանը եւ Բագրատ Մկրտչյանը (Երեւան):

«Բացի Երեւանի չեմպիոն Արմեն Մկրտչյանից, առաջնությանը մասնակցեցին բոլոր առաջատար բոքսիստները եւ անակնկալներ չեղան: Ուժեղագույնները պահպանեցին իրենց դիրքերը», «Սնարքի» բոքսային ասաց մրցումների գլխավոր մրցավար, ֆիզկուլտուրայի ինստիտուտի դոցենտ Օմիրես Գալստյանը:

Հավանական մեկնել է Նախկին ուսումնամարզական հավաքանցկացնելու մարտի 23-ին Մինսկում սկսվելիք օլիմպիական չեմպիոն Ալեքսանդր Մեղվեդի մրցանակների խոշոր միջազգային մրցաշարին նախապատրաստվելու համար:

ՖՈՏՈ «ԷՐԵԲՈՒՆԻ»

Ֆոտո «Էրեբունի» փոքր ձեռնարկությունն առաջարկում է ամեն տեսակի ֆոտո ծառայություններ արտասահմանյան հանրահայտ KODAK, AGFA, KONIKA ֆիրմաների թղթերի եւ ժապավենների վրա:

ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՆՔ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԱԿԱՐԿԱԿԻ ՈՐԱԿ

Կարող եք ստանալ նաեւ հանրանյաց հանդեսի «VIDEO» նկարահանումներ:
Ցանգահարել 55-74-65:

Հասցեն՝ Երեւան, Դիմիտրովի 78ա,
«Էրեբունի» շուկայի մոտ

AGFA Kodak Konica Canon FUJI FILM

ԹԵԹԵՎ ԱՍԼԵՏԻԿԱ

Պրիվալովայի փայլուն նվաճումը

Բարսելոնում ավարտվեց թեթեւ ատլետիկայի ծածկած մարզասրահների աշխարհի 5-րդ առաջնությունը: Գեռ զանց հանդես եկավ Ռուսաստանի հավակնորդը, որը նվաճեց 6 ոսկե, 2 արծաթե եւ 2 բronզե մեդալ: Թիմային հաշվարկով երկրորդ տեղը բաժին հասավ ԱՄՆ-ի հավակնորդներին: Երրորդը՝ Կուբայի ընտրանին էր: Առաջնության հերոս կարելի է համարել մոսկվացի աղջկա Ելենա Պրիվալովան: Իր վերջին հոդվածներից մեկում Ֆրանսիայի մեր թղթակից Գրիգոր Ամիրզայանն այն կարծիքն էր հայտնել, թե ընթացիկ մրցաշրջանը կարող է դառնալ Պրիվալովայի տարի, կանխագուշակումներն սկսում են իրականություն դառնալ: Տաղանդավոր աղջկավարդուհին, ինչպես խոստացել էր, առաջին անգամ մրցասպարեզ դուրս եկավ իր համար նոր մրցասակարդությունում՝ 400 մ վազքում: Եւ առաջին փորձից Պրիվալովան ոչ միայն նվաճեց աշխարհի չեմպիոնուհու կոչումը, այլեւ սահմանեց աշխարհի առաջնությունների ռեկորդ (50.23 վրկ.): Ավելորդ չէ նշել, որ Պրիվալովայի մրցակիցների թվում էր աշխարհի նախորդ առաջնության հաղթող Սանդի Ռիչարդը (Ջամայկա), որը բավարարվեց 2-րդ տեղով:

Տղամարդկանց 400 մ վազքատարածությունում աշխարհի չեմպիոնի կոչումը նվաճեց օլիմպիական չեմպիոն Տատեր Հալը (ԱՄՆ):

Կանանց հեռացատկում հաջողությունն ուղեկցեց Լյուդմիլա Գալկինային (Ռուսաստան), 4x400 մ կանանց փոխանցումավազքում նույնպես հաղթեց Ռուսաստանի հավակնորդը:

800 մ վազքատարածությունում հավասարը չունեցավ աշխարհի կրկնակի չեմպիոնուհի Մարիա Մուտոլան (Մոզամբիկ):

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օրյա հետքերով

ՍԱՀՄԱՆ

Պատերազմի նոր փուլի սկի՞զբ, թե «կրեր նավթամուղի շուրջ»

Սկիզբը էջ 1

Իսկ մարտի 9-ի երեկոյան կրկին գնդակոծվել են Կրասնոսելսկի շրջանի Վահան գյուղի դիրքերը: Այս անգամ հայ սահմանապահները դաստասան զոհողությունների չեն դիմել: Իսկ մարտի լույս 11-ի գիշերը հայկական սահմանապահ ուժերը Կրասնոսելսկի շրջանի Նամբարակ գյուղի մերձակայքում հայտնաբերել են Հայաստանի տարածք ներթափանցած ադրբեջանական հետախուզական մի խումբ: Մոտ 2 ժամ տևած փոխհրանգությունից հետո հակառակորդը դուրս է շրջվել: Ըստ Հայաստանի դաշտպանության նախարարության, նույն երեկոյան ադրբեջանական ուժերը ավելի քան երկու ժամ հրետակոծել և գնդակոծել են Նոյեմբերյանի շրջանի Դավեղ և Շավարշավան գյուղերի հայկական դիրքերը: Պատասխան գործողություններից հետո հակառակորդը լռել է: Մեզ կողմից վիրավորվել է մեկ զինծառայող: Միաժամանակ գնդակոծվել են նաև Տաուշի շրջանի Չինարի գյուղի դիրքերը: Այս անգամ հայ սահմանապահները գերադասել են դաստասխան կրակ չբացել: Ընդհանուր առմամբ այդ խախտումն է անցած շաբաթվա ռազմական գործողությունների ժամանակագրությունը: Բնականաբար, ադրբեջանական աղբյուրները շտապեցին հայտարարել, թե իբր ռազմական գործողություններ վարելով են հայկական ուժերը նպատակ ունենալով շեղել ուշադրությունը հատվածի հիմնական ուղղությունից և լայնածավալ զրոհ նախապատրաստել Ղարաբաղի հյուսիս արևելյան ուղղությամբ դեպի Շահումյան և Թարթառ (Միրբաշիր): Ինչ վերաբերում է դաշտնական ուռնագանձներին, առայժմ Հայաստանի իշխանություններ հայտարարեցին, թե կատարածը դարձյալ մի փորձ է հակամարտությունը նեղայացնել ողջես հայ-ադրբեջանական և ոչ թե դարաբաղ-ադրբեջանական: Ինչպես հայտնի է, մոտկավյան վերջին բանակցությունների ընթացքում ադրբեջանական կողմը հանկարծ եկավ անսպասելի դիրքորոշմամբ հրաժարվեց Ղարաբաղը ողջես հակամարտության կողմ ճանաչելուց, թեև ավելի վաղ հանձն էր դրա: Բնականաբար, դիրքորոշման նման փոփոխությունը պետք է «ադեկվատ» փաստերով, ուստի անհրաժեշտ էր դաստեղծ սկսել հայ-ադրբեջանական սահմանում: Ու թեև Հայաստանի և Ադրբեջանի դաշտպանության նախարարների միջև համաձայնություն էր ձևավորվել հրադադարը դահիճանելու ոգով դրությամբ աշխատանքներ տանել և վերահսկել իրավիճակը, այնուհանդերձ գործնականում դա ոչնչ արդյունք չտվեց իրավիճակը մնում է լարված: Եթե հաշվի առնենք նաև, որ Հայաստանի սահմաններում ադրբեջանական բանակը հաստատության հասնելու ոչնչ շանս չունի (ադրբեջանական հրամանատարությունը պետք է, որ վաղուց հասկացված լիներ դրանում), դարձյալ կրկնենք, որ ադրբեջանական բանակի գործողությունները զուտ հաղթական նպատակներ են հետապնդում:

Այլ կերպ ասած, տվյալ փուլում ադրբեջանական կողմը փորձում է ցույց տալ, թե վերջնական խաղաղությունը դեռ հեռու է: Իսկ դա, դարձյալ ասած, նշանակում է, որ Ադրբեջանը նավթամուղի վերջնական երթուղին ճշտելու պետք է բացառի Հայաստանով անցնելու տարբերակը: Վերջին հաշվով դարձյալ մի բան առանց այն էլ փխրուն խաղաղությունը վտանգված է, և գավալին այն է, որ այն վերականգնելու համար հարկավ թե ուղիների երկկողմանի շփումներն աղդանավոր լինեն:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Նախագահ Բորիս Ելցինին վստահում է 100-ից 1-ը

ՍՈՉԻ, 13 ՄԱՐՏ, ԻՍԱ-ՊՐԵՍ ՏԵՍԻՄ: Ե թե մեկ տարի առաջ ըստ հարցման արդյունքների նախագահ Ելցինին վստահող ամեն մի ռուսաստանցու բաժին էր ընկնում երկու չվստահող, ապա այսօր վստահողների և չվստահողների թվի հարաբերությունը 1/10-ի է: Որքան մեծ է հարցման ենթարկվածների տարիքը, այնքան այդ անձինք փիլ հույսեր են կապում Բորիս Ելցինի հետ: Այս առումով Ելցինի հեղինակությունը այնքան էլ չի ընկել ուսանողության և զինվորականների մեջ: Իսկ ընդհանուր առմամբ, այս կամ այն չափով, ոչ տարբեր ղեկավարին չի հավատում «հատարակական կարծիք» հիմնադրամի հարցմանը ենթարկված ռուսաստանցիների 71 տոկոսը: Բոլորովին անվստահ է 42 տոկոսը, իսկ 13 տոկոսը դժվարանում է վճռորոշ կողմ կամ դեմ կարծիք հայտնել: Նախագահ Ելցինի հանդեպ որոշ վստահություն ունի հարցման ենթարկվածների ընդամենը 7 տոկոսը: 1 տոկոսը նրան վստահում է անառարկելիորեն, իսկ 9 տոկոսը դժվարացել է դաստասխանել:

ՎԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մարտի 16-ին, ժամը 15-ին, Ֆիլհարմոնիայի փոքր դահլիճում տեղի կունենա անվանի արձակագիր, հասարակական գործիչ Զորի Բալայանի ծննդյան 60-ամյակին նվիրված մեծարման հանդիսություն:

Մուտքը հրավիրատոմսերով:

Հայաստանի գրողների միություն

ԳՆՈՒՄ ԵՆՔ

ոսկի և լոքի կանխիկ վճարումով:

Զանգահարել՝ 527663

ԳՆՈՒՄ ԵՆՔ

Ֆրանսիական օծանելիքներ և դեզոդորներ:

Հեռախոսներ՝ 527137, 614602:

«ԱՐԱՐԱՏ» ավիաձեռնարկությունը

(«Հայկական ավիաուղիներ» ավիաընկերության պետական դուստր ձեռնարկություն)

ՅԱԿ-40 ինքնաթիռով կատարում է կանոնավոր չվերթեր Երևանից («Էրեբունի» օդանավակայանից) Սոչի, Ստավրոպոլ, Վոլգոգրադ, Անապա, Մահաչկալա, Վլադիկավկազ, Բաքու, Նալչիկ:

Հեռ. 486-941, 484-761

Դուք կարող եք պատվիրել ՅԱԿ-40, որը Ձեզ և Ձեր բեռները կհասցնի Ա.Դ.Հ.-ի և արտասահմանյան ցանկացած երկիր.

«ԱՐԱՐԱՏ» ավիաձեռնարկության ՄԻ-8 ուղղաթիռներով Դուք կարող եք իրականացնել՝

- ուղեւորների եւ ուղերձների փոխադրում
- բեռների եւ փոստի փոխադրում
- բժշկական օգնություն
- բարձր լարվածության հաղորդալարերի, կապի գծերի, գազատարի, նավթամուղի, գետերի, ջրանցքների, ավտոմայրուղիների հետազոտում եւ պարեկություն
- արշավների, երկրաբանական աշխատանքների սպասարկում
- Հայաստանի սահմաններում էքսկուրսիոն թռիչքներ
- գետերի, ջրանցքների, ավտոմայրուղիների հետազոտում եւ պարեկություն
- արշավների, երկրաբանական աշխատանքների սպասարկում

Ավիաձեռնարկության թռիչքային անձնակազմը ունի Լեռնային Ղարաբաղում ծայրահեղ իրավիճակներում աշխատելու բազմակողմ փորձ, իսկ ավիասպասարկման գները գրավիչորեն ցածր են շուկայականից

Երեւան, Արշակունյաց պ.135, օդանավակայան «Էրեբունի»
Հեռ՝ 486-941, 484-761 Ֆաքս՝ 448-987

Հայաստանի Հանրապետության ազգային փոխադրող

«Քայլակաղ Ավիատուղիներ»

ավիաընկերությունը հայտնում է, որ ապրիլի 3-ից կգործի կանոնավոր չվերթ

Երեւան - Սոֆիա - Երեւան

չվերթը կկատարվի *«Զվարթնոց»* օդանավակայանից:

Չվերթները կայանալու են ամեն երկուշաբթի:

Տոմսերը կարելի է ձեռք բերել ավիաընկերության գլխավոր գործակալությունից:

Հասցեն՝ Մաշտոցի պող. 15

AEROFLOT

ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ

ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ



ԿԱՏԱՐՈՒՄ Է ԱՆՎԱՅՐԷՋ ԹՌԻՉՔՆԵՐ

ԵՐԵՎԱՆ - ՄՈՍԿՎԱ

ԻԼ-62Մ ՕԴԱՆԱՎՈՎ

Մեզ մոտ Դուք կարող եք ձեռք բերել մեկնելու և վերադարձի տոմսեր, որոնք ուժի մեջ են 1 տարվա ընթացքում: Ամրագրման և թռիչքի ժամկետի փոփոխության համար ուղևորից դրամական պահումներ չեն կատարվում: Վերադարձի ամսաթիվը Դուք կարող եք ամրագրել կամ թողնել ազատ ըստ Ձեր հայեցողության: Մեր երթուղիներում Ձեր շահերը պաշտպանված են միջազգային օրենքներով

Թռիչքների օրերը — երկուշաբթի, չորեքշաբթի, ուրբաթ, կիրակի

Թռիչքը Երեւանից՝ 15:50, ժամանումը Մոսկվա՝ 18:40 (Մոսկվայի ժամանակով)

Ինքնաթիռում նախատեսվում է սպասարկման 3 կարգ՝ տնտեսական, բիզնես եւ 1-ին:

Տոմսերը վաճառվում են հետեւյալ հասցեով — Սարյանի փ. 22, Գլխավոր փոստատուն, 1-ին հարկ, Աերոֆլոտի գործակալություն

Տեղեկությունները եւ ամրագրումը հետեւյալ հեռախոսներով՝ 53-21-31, 22-35-80

Ամենաբարենպաստ պայմաններով թռիչքներ դեպի աշխարհի 158 քաղաքներ

COMPANY

«ԱՅՍԲԵՐԳ»

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է

բեռների ավիափոխադրում

ԵՐԵՎԱՆ - ՄՈՍԿՎԱ

(ԻԼ-76ՏԴ ինքնաթիռով, Չկալովսկի օդանավակայան)

- Մատչելի գներ
- Վճարումը՝ ցանկացած ձեւով
- Կանոնավոր չվերթներ
- Բեռնման ժամանակը՝ 6 ժամ

Հնարավոր է հումքի, սարքավորումների, նավթամթերքների, արդյունաբերական ապրանքների պայմանագրային առաքում ԱՊՀ եւ արտասահմանյան երկրներից:



Հատուկ առաջարկ

Սանտեխնիկայի կոմպլեկտներ Պրահայից:

Ցանկացած չափսի եւ մակնիշի էլեկտրոդներ Երեւանյան պահեստներից: Հնարավոր է հատուկ էլեկտրոդների առաքում ըստ պատվերի:

Հանրապետության հր. Միությունների տուն, 3-րդ հարկ, սեն. 32

☎ 520531, 560633, 565095

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երեւան 23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասել 69149. Պատուեր 1994 Տպաքանակը 7000 Ստորագրված է տպագրության՝ 13.03.1995 Գինը՝ 40 դրամ

digitised by A.R.A.R.@